

ԶԵԿՈՒՅՑ

ԾԵՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ
ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2017-2021 ԹԹ.

Հեղինակներ՝ Մարիետա Թեմուրյան
Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց



Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Մեթոդաբանություն	5
ԻՐԱՎԻՃԱԿԸ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	5
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ	8
Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի կառուցվածքային խնդիրները	8
Գերակայությունների կատարողականը	12
Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի կատարողականը թվերով	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	19
Առաջարկություններ	20
ՀԱՎԵԼՎԱԾ. Գնահատումն ըստ առանձին միջոցառումների	22

Ներածություն

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բնակչության ծերացումը գնահատում է ամենակարևոր բժշկական և սոցիալական ժողովրդագրական խնդիրն աշխարհում: Ըստ կանխատեսումների՝ 2050 թ. 60 և ավելի տարեկան անձանց թիվը գերազանցելու է 10-24 տարեկանների թվին (2.1 միլիարդ և 2 միլիարդ համապատասխանաբար)¹: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2016 թ.-ից որդեգրել է յուրաքանչյուրի համար երկար և առողջ կյանքի ապահովման ռազմավարական ուղղությունը՝ ծերացումը սահմանելով որպես տարեց հասակում բարեկեցություն ապահովելու ֆունկցիոնալ կարողությունների պահպանման գործընթաց²:

Միավորված ազգերի կազմակերպությունն առաջիկա տասնամյակը (2021-2030 թթ.) հռչակել է առողջ ծերացման տասնամյակ և առանձնացնում է 4 կարևոր ուղղություն, որոնք պետք է թիրախավորվեն այդ ռազմավարական նպատակն ապահովելիս.

- **բարենպաստ միջավայր տարեց անձանց համար**՝ նման միջավայրն ապահովում է ֆիզիկական և սոցիալական խոչընդոտների վերացում և քաղաքականությունների, համակարգերի, ծառայությունների, ապրանքների ու տեխնոլոգիաների ներդրում, որոնք ապահովում են առողջ ծերացման անհրաժեշտ պայմաններ և հնարավորություն են տալիս մարդկանց շարունակել անել այն, ինչ իրենց համար կարևոր է, նույնիսկ երբ նրանք կորցնում են դա անելու կարողությունը
- **պայքար տարիքի հիմքով խտրականության դեմ**՝ տարիքի հիմքով խտրականությունն ազդում է մշակվող քաղաքականությունների ու ծրագրերի վրա և բացասական հետևանքներ է ունենում տարեց անձանց առողջության ու բարեկեցության համար
- **համալիր խնամք**՝ ենթադրում է որակյալ բժշկական ծառայությունների հասանելիություն՝ չպայմանավորված տարեց անձի ֆինանսական բարեկեցությամբ
- **երկարատև խնամք**՝ որակյալ երկարատև խնամքի հասանելիությունը կարևոր է իրենց մասին հոգ տանելու հմտությունները կորցրած մարդկանց համար՝ պահպանելու իրենց ֆունկցիոնալ կարողությունները, օգտվելու մարդու հիմնական իրավունքներից և ապրելու արժանապատիվ³:

¹ The World Health Organization (WHO) approach to healthy ageing, *Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ՄԶԿ) մոտեցումը առողջ ծերացմանը*, հոդված, *Maturitas* ամսագիր, 139 (2020), էջեր 6-11, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.maturitas.org/article/S0378-5122\(20\)30282-6/pdf](https://www.maturitas.org/article/S0378-5122(20)30282-6/pdf)

² Decade of Healthy Ageing, *Առողջ ծերացման տասնամյակ*, Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 73-րդ նստաշրջան, էջ 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://apps.who.int/gb/ebwha/pdf_files/WHA73/A73_INF2-en.pdf

³ UN Decade of Healthy Ageing, *ՄՄԿ-ի Առողջ ծերացման տասնամյակ՝ 2021-2030 թթ.*, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.who.int/initiatives/decade-of-healthy-ageing>

ՀՀ կառավարությունը 2014 թ. հաստատել է Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը⁴: Ոլորտային հաջորդ փաստաթուղթը ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշումն էր, որով հավանության է արժանացել Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը⁵ (այսուհետ՝ Ռազմավարություն, Միջոցառումների ծրագիր): Հաջորդը 2021 թ. ապրիլի 8-ի որոշմամբ հաստատված տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցն է⁶: Հայեցակարգային փաստաթղթերը կարևոր նշանակություն ունեն տարեց անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ կարևոր է հաշվի առնել, որ որքան էլ քաղաքականությունների անհրաժեշտ և կարևոր բաղադրիչ են, դրանք հաջողությամբ չեն կարող իրականացվել առանց որդեգրված մարտավարությունների շարունակականության երաշխավորման:

Սույն զեկույցում ներկայացվում են 2017-2021 թվականների Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի մշտադիտարկման արդյունքները: Մա տարեց անձանց իրավունքների ապահովման ոլորտի քաղաքականության իրականացման երկրորդ գնահատումն է⁷:

Ռազմավարության նպատակն էր «ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր տարեց մարդկանց համար՝ ապահովելով նրանց արժանապատիվ ծերացման գործընթացը»: Նախատեսվել էր 24 միջոցառում, սահմանվել դրանց կատարման ժամկետները, պատասխանատուները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները և արդյունքային ցուցանիշները:

⁴ Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93327>

⁵ Տե՛ս Կառավարության արձանագրային որոշումը հետևյալ հղմամբ՝ <https://www.e-gov.am/protocols/item/747/>

⁶ Տե՛ս Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում թիվ 498-Լ առ 8 ապրիլի 2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35926/>

⁷ 2018 թ. գնահատվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թ. սեպտեմբերի 18-ին հաստատված Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը: Գնահատման արդյունքները հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://drive.google.com/file/d/1EQL7MP6A0RKgdFfTRqdU8h50ISGOak5p/view>

Մեթոդաբանություն

Ռազմավարության միջոցառումների ծրագրի մշտադիտարկման նպատակով սահմանվել է ծրագրով նախատեսված 24 միջոցառումների գնահատման հետևյալ սանդղակը՝

- *կատարվել է*
- *կատարվել է մասամբ*
- *չի կատարվել:*

Յուրաքանչյուր միջոցառման գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով արդյունքային ցուցանիշները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև միջոցառման շրջանակում իրականացված աշխատանքների թիրախային լինելը:

Կատարվել է գնահատվել են միջոցառումները, որոնց արդյունքային ցուցանիշներն ապահովվել են ակնկալվող արդյունքներում նշված գործողությունների իրականացման միջոցով:

Մասամբ կատարվել է գնահատվել են միջոցառումները, որոնց իրականացման ուղղությամբ աշխատանքներ են կատարվել, սակայն ամբողջությամբ չեն ապահովվել արդյունքային ցուցանիշները, և իրականացվել է ակնկալվող արդյունքներին հասնելու համար նշված գործողությունների մի մասը:

Չի կատարվել գնահատվել են միջոցառումները, որոնց ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել, կամ արդյունքային ցուցանիշները չեն ապահովվել:

Գնահատման նպատակով տեղեկատվությունը ստացվել է պատասխանատու կատարողներին ուղղված տեղեկատվության հարցումներից և բաց աղբյուրներից:

Իրավիճակը Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի կատարողականի համատեքստում

Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը պետք է ուղղված լինեն հետևյալ հիմնական խնդիրների լուծմանը՝

- իրավական դաշտի անկատարություն,
- ծառայությունների աշխարհագրորեն անհամաչափ բաշխվածություն, ոչ բավարար որակ, ծավալ, մատչելիություն, որոշ մասի՝ առհասարակ բացակայություն, ծառայությունների ապահովման ոչ բավարար ֆինանսական միջոցներ,
- տարեցների ակտիվության ցուցանիշների ամբողջական հավաքագրման մեխանիզմի բացակայություն,
- տարեցների իրազեկության ցածր մակարդակ և որոշումների կայացմանը նրանց մասնակցության մեխանիզմների բացակայություն,

- ծառայությունների մատուցման միասնական ու համակարգային մոտեցումների բացակայություն,
- ծառայությունների պատվիրակման գործընթացում բավարար ռեսուրսների և «մրցակցային» մեխանիզմների բացակայություն:

Ռազմավարությամբ թեև նախատեսվել էին գործողություններ՝ լրացնելու իրավական դաշտի բացերը, այնուամենայնիվ այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք էին, օրինակ՝ խնամատար ընտանիքներում տարեցների խնամքի կազմակերպումը կամ երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրումը, չեն իրականացվել անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող նորմի բացակայության պատճառով: Այսինքն՝ իրավական դաշտի բացը 5 տարվա ընթացքում չի շտկվել, և մի խումբ անձանց կարիքներ այդպես էլ չեն բավարարվել (տե՛ս Միջոցառումներ 8, 9, 13):

Նախատեսվել էին նաև մարզերում ծառայությունների ներդրման միջոցառումներ, սակայն դրանք կամ չեն իրականացվել (ինչպես, օրինակ՝ Վայոց ձորի, Տավուշի կամ Արագածոտնի մարզերում), կամ ծառայությունները ներդրվել են այն համայնքներում, որտեղ միջազգային կամ հասարակական կազմակերպությունները ծրագրեր են իրականացրել (տե՛ս, օրինակ՝ Միջոցառում 2): Գյուղական համայնքներում տարեցների համար ծառայությունները շարունակում են մնալ անհասանելի:

Աջակցության ծրագրերը, շատ դեպքերում, իրականացվել են հասարակական և/կամ միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ աջակցությամբ, ինչը նշանակում է, որ հնարավոր է՝ կարիքները բավարարվում են ոչ թե ըստ պահանջի, այլ ըստ այդ պահին առկա կարճաժամկետ նշանակության ռեսուրսի: Խնդիր է նաև այն, որ պատշաճ չի հաշվառվում տրամադրվող աջակցությունը, և ստեղծվում է մի իրավիճակ, երբ նույն անձը կարող է աջակցություն ստանալ մի քանի աղբյուրից այն դեպքում, երբ մեկ այլ անձ գրկված է որևէ աջակցությունից:

Ինչ վերաբերում է տարեց անձանց՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացման խնդրին, ապա միջոցառումներ թեև նախատեսվել էին, սակայն թիրախային չեն իրականացվել: Միջոցառումների վերաբերյալ կազմակերպությանը տրամադրած տեղեկությունները հիմնականում ոչ թե իրավունքների վերաբերյալ տարեցների իրազեկման մասին են, այլ ներկայացնում են նրանց կյանքը, մատուցվող ծառայությունները և այլ համանման տեղեկություններ: Տարեցների իրավունքների իրազեկմանը վերաբերող տեղեկատվական նյութերը եզակի են, և դրանք էլ մատչելի չեն: Օրինակ՝ հրապարակվում են պետական մարմինների պաշտոնական կայքէջերում, մինչդեռ կայքէջում հրապարակման հասանելիության անհրաժեշտ նախապայման է համակարգչի կամ սմարթֆոնի և ինտերնետի առկայությունը, ինչպես նաև՝ կայքում որոնողական հմտություններ ունենալը: Նման մոտեցումը չի կարող համարվել պատշաճ՝ տարեցների իրազեկության մակարդակի բարձրացման համատեքստում:

Ռեզուլտատների մեջ հղում է արվում միջազգային մոտեցումներին՝ նշելով, մասնավորապես, որ առողջ և ակտիվ երկարակեցությունը ներառում է 1) ֆիզիկական առողջություն, 2) ֆինանսական ապահովություն, 3) արդյունավետություն ու զբաղվածություն, 4) անկախություն, 5) լավատեսություն, 6) հասարակական կյանքում ներգրավվածություն:

Այս մոտեցումները թեև ամրագրվեցին, այնուամենայնիվ ոչ բոլորի ապահովման ուղղությամբ նախատեսվեցին միջոցառումներ: Օրինակ՝ որևէ միջոցառում նախատեսված չէր տարեցների ֆինանսական ապահովության ուղղությամբ, մինչդեռ 2022 թ. դրությամբ նվազագույն թոշակը **28.600 ՀՀ դրամ է**, իսկ նվազագույն սպառողական գամբյուղի արժեքը 2022 թ. երկրորդ եռամսյակում կազմել է **82.198 ՀՀ դրամ**, որից պարենային գամբյուղի արժեքը՝ **44.431 ՀՀ դրամ**⁸:

Որոշ մոտեցումների համատեքստում միջոցառումներ թեև նախատեսված էին, սակայն դրանք կամ չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ թիրախային, և չեն ապահովվել արդյունքային ցուցանիշները (օր՝ ֆիզիկական առողջության, հասարակական կյանքում ներգրավվածության, զբաղվածության ապահովման ուղղությամբ): Մասնավորապես՝ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ գործազուրկների թիվը 55 և բարձր տարիքի անձանց շրջանում կազմել է 18.9 տոկոս (10.996 մարդ): Նշենք, որ այս ցուցանիշը երրորդ հորիզոնականում է 35-44 և 44-54 տարիքային խմբերից հետո: Ավելին՝ Հայաստանում՝ 35-ից բարձր տարիքային խմբում, գործազրկությունը կազմում է 67.3 տոկոս⁹: Համաձայն Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման 2021-2023 թթ. ծրագրի՝ բավական ցածր է տարեցների զբաղվածության ցուցանիշը. զբաղված բնակչության ընդհանուր թվաքանակում 55+ անձինք կազմում են ընդամենը 19 տոկոս, իսկ 65+ տարիքի աշխատողների թիվը տարեցների ընդհանուր թվաքանակում հասնում է ընդամենը 11 տոկոսի¹⁰:


Տարեց անձանց առողջության պահպանմանն ուղղված 3 միջոցառում է նախատեսվել (Գերակայություն 2), որոնք թերի են կատարվել: Օրինակ՝ նախատեսված ՊԱՊ հետազոտությունը 2021 թ. իրականացվել է թիրախային խմբի մոտ մեկ տոկոսի մոտ:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հունիս, Հավելված 2.հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջ 370, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_06_22a_6200.pdf, էջ 370

⁹ Տե՛ս Աշխատանքի շուկայի ցուցանիշներ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf, էջ 93

¹⁰ Տե՛ս Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում թիվ 498-Լ առ 8 ապրիլի 2021 թ., Հավելված 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35926/>

Ավելին՝ միջոցառումներից մեկի արդյունքում պետք է նվազեր բնակչության մահացության ցուցանիշը, մինչդեռ 2018-2021 թթ. ընթացքում այն աճել է 12.5 տոկոսով¹¹:



Աճել է նաև թոշակատուների շրջանում ինքնասպանության ցուցանիշը՝ կազմելով 26.7 տոկոս 2021 թ.ին (26.2 տոկոս՝ 2020 թ.-ին): Բացի դրանից, որ այս ցուցանիշն աճել է, այն նաև երկրորդ հորիզոնականում է գործազուրկների շրջանում ինքնասպանության ցուցանիշից հետո¹²: Այս ցուցանիշը կարող է պայմանավորված լինել, ի թիվս այլնի, տարեց անձանց սոցիալական ծանր պայմաններով, լավատեսության և կյանքի արժանապատիվ պայմանների բացակայությամբ:

Ռազմավարության և դրա կատարումն ապահովող միջոցառումների գնահատման ամփոփ նկարագիրը

Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի կառուցվածքային խնդիրները

Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի ուումնասիրության ընթացքում արձանագրվել են մի շարք կառուցվածքային/տեխնիկական խնդիրներ, որոնք փաստում են ոլորտի նկատմամբ հետևողական քաղաքականության, հաշվետվողականության, գերատեսչությունների միջև պատշաճ համագործակցության, տեղեկատվության համակարգային հավաքագրման բացակայության մասին:

Այսպես, սույն Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը տարեց անձանց վերաբերող երեք ռազմավարական փաստաթղթերից երկրորդն է: Երեք փաստաթղթերի հաստատման ժամկետները արդեն իսկ արձանագրում են ոլորտի նկատմամբ հետևողական և շարունակական քաղաքականության բացակայությունը: Անհասկանալի է,

¹¹ 2020 և 2021 թթ. մահացության ցուցանիշից հանվել են 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով զոհվածների և COVID-19-ից մահացածների թվերը

¹² Տե՛ս Ժողովրդագրական իրավիճակը, էջ 159, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://armstat.am/file/article/sv_12_21a_520 .pdf](https://armstat.am/file/article/sv_12_21a_520.pdf)

թե ինչու է ընդունվել 2017-2021 թթ. Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը, եթե դեռ ընթացքում էր 2015-2019 թթ. միջոցառումների ծրագիրը: Նույն կերպ անհասկանալի է, թե ինչ հիմքով է 2021 թ. ապրիլի 8-ին ընդունվել տարեցներին մատուցվող ծառայությունների բարելավման միջոցառումների պլան-ժամանակացույցը, եթե դեռ ուժի մեջ էր 2017-2021 թթ. Ռազմավարությունն ու Միջոցառումների ծրագիրը: Այսինքն դեռևս մինչև իրականացվող ծրագրի ավարտը հաստատվում է նոր ծրագիր, առանց չավարտված ծրագրի արդյունավետության գնահատման, որը անհրաժեշտ նախապայման է նոր ծրագրի հիմնավորվածության և արդյունավետ իրականացման ապահովման համար:

Հետևողականության բացակայության մասին են փաստում նաև փաստաթղթերում արձանագրված խնդիրներն ու իրավիճակի նկարագրությունը: Տարեցներին վերաբերող երկու քաղաքական փաստաթղթերը (սույն Միջոցառումների ծրագիրը և 2021 թ. ապրիլի 8-ին հաստատված տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը) 5 տարվա տարբերությամբ արձանագրում են, որ Հայաստանի Հանրապետությունը հիմնական շեշտը դնում է տարեցների սոցիալական և նյութական կարիքների բավարարման վրա, և անհրաժեշտ է նրանց պահանջմունքների սպեկտրը դիտարկել ավելի բազմաշերտ: Այսինքն, 5 տարի առաջ արձանագրված խնդիրը և մոտեցումների փոփոխության անհրաժեշտությունը կրկին օրակարգային են: Բացի դրանից՝ երկու փաստաթղթերում էլ հղում է կատարվում 2016 թ. իրականացված տարեցների կարիքների գնահատմանը, որը հիմք է ծառայել միջոցառումների մշակման համար: Ըստ այդ գնահատման արդյունքների՝ 2017-2021 թթ. Միջոցառումների ծրագրով նախատեսվել էր 2018-2019 թթ. ընթացքում տարեցներին ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման փորձնական ծրագրերի իրականացում մասնավորապես Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում (Միջոցառում 2): 2021-2023 թթ. Ծրագրում նշվում է, որ մինչև 2020 թվականը (երբ դրամաշնորհի տրամադրման համար մրցույթներ հայտարարվեցին ՀՀ բոլոր մարզերի համար) հանրապետության Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերում տարեցներին մատուցվող որևէ խնամքի ծառայություն ներդրված չի եղել¹³:

Եվ վերջապես՝ Միջոցառումների ծրագրի ավարտից 3 ամիս առաջ այն հաստատված արձանագրային որոշումը ճանաչվում է անվավեր¹⁴: Այսպիսով՝ գնահատումը կատարվում

¹³ Տե՛ս Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում թիվ 498-Լ, առ 8 ապրիլի 2021 թ., Հավելված 1, էջ 7, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/04/498_1.pdf

¹⁴ ՀՀ կառավարության որոշում 1728-Ն առ 21 հեկտեմբերի 2021 թ., որով անվավեր են ճանաչվում ՀՀ կառավարության կողմից ընդունված բոլոր արձանագրային որոշումները, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157069> և Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93327>

է, Ռազմավարությունը և միջոցառումները մշակվում են, սակայն 5 տարի անց նույն ելման դիրքում ենք: Եվ որևէ կերպ գնահատված կամ վերլուծված չեն նախատեսված նպատակներին չհասնելու պատճառները:

Ռազմավարության նկարագրական հատվածում ընդգծվում է մշտադիտարկման և գնահատման կարևորությունը, սակայն չկա որևէ հստակ ձևակերպում առ այն, թե ով է մշտադիտարկման և գնահատման պատասխանատուն, ինչ ժամկետներում և ինչ ընթացակարգով պետք է իրականացվի մշտադիտարկումը, երբ և ում կողմից պետք է հրապարակվեն հաշվետվությունները: Ավելին՝ զեկույցի պատրաստման օրվա դրությամբ պահպանված չի եղել անգամ Ռազմավարությամբ մշտադիտարկմանը վերաբերող միակ հստակ սահմանված պահանջը, այն է՝ «... 2021 թվականին նախատեսվում է իրականացնել Ռազմավարության վերջնական ամփոփիչ գնահատում, ինչի արդյունքում կհրապարակվի համապատասխան հաշվետվություն»:

Բացի դրանից՝ Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգի համաձայն¹⁵ Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթերի դեպքում, ինչպիսին նաև սույն Ռազմավարությունն է, յուրաքանչյուր տարի (ռազմավարության ընդգրկման ժամանակահատվածի երկրորդ տարվանից սկսած) մինչև ապրիլի 15-ը պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինները ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացնում ռազմավարության առաջընթացի հաշվետվությունը, որի նկատմամբ պահանջները սահմանվում են ռազմավարությամբ՝ միաժամանակ այն հրապարակելով պետական կառավարման համակարգի մարմնի պաշտոնական կայքում¹⁶: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում որևէ հաշվետվություն սույն Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հրապարակված չէ:

Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի ուժի մեջ լինելու ժամանակահատվածում փոփոխություններ են կատարվել Կառավարության կազմում: Մասնավորապես ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, կրթության և գիտության, մշակույթի, տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունները վերանվանվել են, սակայն Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը հաստատող Կառավարության որոշման մեջ համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, մինչդեռ նման փոփոխությունն օրենսդրական տեխնիկայի կանոն է: Այսինքն՝ միջոցառումների կատարողներ են գերատեսչություններ, որոնք փաստացի գոյություն չունեն:

¹⁵ Մեթոդական հրահանգը հաստատող ՀՀ կառավարության որոշումը անվավեր է ճանաչվել 21.10.21 [N 1728-Ն](https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128230) որոշման 1-ին կետով, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128230>

¹⁶ Տե՛ս Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից N 42 առ 5 հոկտեմբերի 2017 թ. պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=116402>

Որոշ միջոցառումների ակնկալվող արդյունքները համարժեք չեն միջոցառման բովանդակությանը: Օրինակ,՝ արդյո՞ք կարող ենք բակերում գրուցարանների տեղադրումը կամ մշակութային տներում խաղասենյակների վերանորոգումը համարել տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովման համարժեք լուծում (Միջոցառում 18):

Տվյալների տրամադրման և հավաքագրման հստակ մեխանիզմներ չկան: Կազմակերպության հարցումներին տրամադրվել են միջոցառմանը չվերաբերող տեղեկություններ, կամ նույն տեղեկությունը, գլխավորապես իրավական կարգավորումների մասով, տրամադրվել է որպես մի քանի միջոցառման կատարողական: Տեղեկությունները հաճախակի չեն տրամադրվել ըստ թիրախային գործողության, ըստ մատուցված ծառայության տեսակի կամ ըստ սահմանված ժամկետների ու տարեթվերի: Նման մոտեցումը կրկին մտահոգիչ է պատկան մարմինների հաշվետվողականության առումով:

Ռազմավարության իրականացման ընթացքում պատասխանատու մարմինների միջև բացակայել է կամ պատշաճ չի եղել համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչը չի կարող բացասաբար չանդրադառնալ միջոցառումների իրականացման արդյունավետության և որակի վրա: Օրինակ՝ որոշ միջոցառումների շրջանակում ոչ բոլոր պատասխանատուներն են աշխատանքներ իրականացրել: Մեկ այլ դեպքում՝ պատասխանատուները տեղեկացված չեն եղել միջոցառման շրջանակում իրականացված աշխատանքների մասին:

Միջոցառումների ծրագրում 15-րդ միջոցառման արդյունքային ցուցանիշ առհասարակ չի նշվել, իսկ 22-րդ միջոցառման պատասխանատուները հաստատվել են բացառապես համաձայնության նախապայմանով: Այսինքն՝ միջոցառման կատարումն ի սկզբանե հարցականի տակ էր:

Ռազմավարությունների մշակման գործընթացում կարևոր է ուշադրություն դարձնել նաև զգայուն, չխարանող եզրույթների կիրառման խնդրին: Օրինակ՝ միջոցառում 16-ում կիրառվել է «ծերունական փսիխոզով, թուլամտությամբ **տառապող տարեց**» բառակապակցությունը: Եթե Կառավարությունը, ինչպես որ հայտարարվել է, անհրաժեշտ է համարում պայքարել պասիվացնող մոտեցման և կարծրատիպային վերաբերմունքի դեմ¹⁷, եզրույթների նկատմամբ զգայունությունը պետք է կարևորվի: Միջազգային ուղեցույցները հորդորում են օգտագործել անձակենտրոն եզրույթներ՝ խուսափելով անձանց պասիվացնող, խղճահարություն առաջացնող բառապաշարից, ինչպիսին է նաև «տառապող» բառը:

¹⁷ Տե՛ս Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում թիվ 498-Լ, առ 8 ապրիլի 2021 թ., Հավելված 1, էջ 9, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/u/files/file/decrees/kar/2021/04/498_1.pdf

Գերակայությունների կատարողականը

Տարեց անձանց իրավունքների ապահովման նպատակով Ռազմավարությամբ սահմանվել են վեց գերակայություններ, որոնք են՝

1. խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման ներկա համակարգի կատարելագործում և խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում, վճարովի և համավճարի սկզբունքով խնամքի ծառայությունների տրամադրման համար իրավական կարգավորումների ապահովում
2. տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, անկախության և արժանապատվության պահպանում
3. պետության կողմից տարեցների խնամքի ծառայությունները ոչ պետական կազմակերպություններին մրցակցային սկզբունքով պատվիրակման համար անհրաժեշտ հիմքերի և մեխանիզմների ստեղծում
4. տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում
5. տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում
6. տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում:

Միջոցառումների ծրագրով վեց գերակայություններից միայն հինգի շրջանակում են սահմանվել միջոցառումներ: Մասնավորապես՝ «պետության կողմից տարեցների խնամքի ծառայությունները ոչ պետական կազմակերպություններին մրցակցային սկզբունքով պատվիրակման համար անհրաժեշտ հիմքերի և մեխանիզմների ստեղծում» գերակայության համար առանձին միջոցառումներ չեն սահմանվել: Միևնույն ժամանակ՝ Միջոցառումների ծրագրով նախատեսված «Տարեց և կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառում» միջոցառումը, որի արդյունքային ցուցանիշն է՝ «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների պատվիրակում առնվազն չորս հասարակական կազմակերպության՝ մրցակցային սկզբունքով», կարող ենք դիտարկել որպես ուղղված նշված գերակայությանը:

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ	ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ
Գերակայություն 1		
1	Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում	Չի կատարվել
2	Հանրապետությունում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված փորձնական ծրագրերի իրականացում	Չի կատարվել
3	Տարեցներին մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքի ապահովում	Կատարվել է մասամբ
4	Տարեցներին մատուցվող տնային խնամքի սոցիալ-առողջապահական համալիր ծառայությունների ներդրում	Չի կատարվել
5	Տարեցների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ըստ նրանց գնահատված կարիքների	Կատարվել է մասամբ
6	Միջհամայնքային տրանսպորտային սպասարկման բարելավում	Կատարվել է մասամբ
7	Տարեցների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում խնամքի, ինչպես նաև ցերեկային կենտրոններում վճարովի և համավճարի սկզբունքով ծառայությունների տրամադրման մեխանիզմների սահմանում	Կատարվել է
8	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրման իրավական հիմքերի ու մեխանիզմների ստեղծում	Չի կատարվել
9	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրում	Չի կատարվել
10	Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական մեխանիզմների մշակում և ՀՀ-ում գործող պետական և հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում	Կատարվել է մասամբ
11	Տարեց և կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառում	Կատարվել է
12	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրություն	Չի կատարվել
13	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծում, փորձնական ծրագրի մշակում և իրականացում	Չի կատարվել

Գերակայություն 2		
14	Տարեցների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, բժշկական օգնության և խնամքի վերաբերյալ հանրային իրազեկում	Չի կատարվել
15	55 և ավելի տարիքային խմբերում միզասեռական համախտանիշի, օստիոպարոզի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, այդ թվում՝ կրծքագեղձի վաղ ախտորոշման, սկրինինգային ծրագրերի իրականացում և հայտնաբերված ախտաբանությունների անվճար բուժման կազմակերպում	Կատարվել է մասամբ
16	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար շուրջօրյա խնամքի մասնագիտացված տների ստեղծում	Չի կատարվել
Գերակայություն 3		
17	Լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում և այդ շտեմարանում տարեցների լրացուցիչ և շարունակական կրթության մասին տվյալների ընդգրկումը	Չի կատարվել
18	Տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովում	Կատարվել է մասամբ
19	Տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում	Կատարվել է
20	Տարեցների ներուժի օգտագործում՝ ժողովրդական արհեստների փոխանցում երիտասարդ սերնդին	Կատարվել է մասամբ
21	Ավագ սերնդի վաստակի գնահատում, միջսերնդային կապերի ամրապնդում, համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովում	Կատարվել է մասամբ
22	Համայնքներում տարեցների սոցիալական և տնտեսական ակտիվության բարձրացման նպատակով ակտիվ կենսակերպ վարող տարեցների մասնակցությամբ համայնքային խմբերի ստեղծում և աջակցում	Կատարվել է
Գերակայություն 4		
23	Տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում	Կատարվել է
Գերակայություն 5		
24	Տարեց անձանց՝ աշխատանքային կյանքում առավել երկար մնալու իրավական հիմքերի և կարգավորումների ապահովում	Չի կատարվել

Գերակայություն 1: Խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման գործող համակարգի բարելավում

Միջոցառումների ծրագրով նախատեսված 24 միջոցառումներից 13-ն ուղղված էին խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի բարելավմանը: Խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման գործող համակարգի առարկայական բարեփոխումներ, սակայն, չեն արձանագրվել: Նախատեսվել, բայց տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների հիման վրա սոցիալական ծառայությունների ներդրման փորձնական ծրագրեր չեն իրականացվել, չեն ներդրվել տնային խնամքի սոցիալ-առողջապահական համալիր ծառայություններ, չի ապահովվել երկարատև խնամք իրականացնող ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրումը, չեն ձևավորվել մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքերը: Թեև որոշակի աշխատանքներ են տարվել տարեց անձանց կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման, մատուցվող ծառայությունների քարտեզագրման, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, միջհամայնքային տրանսպորտի բարելավման ուղղությամբ, այնուհանդերձ դրանք բավարար չեն կարող համարվել համակարգի պահանջվող բարեփոխումների գործում:

Որոշ միջոցառումներ, որոնցով նախատեսվում էր ծառայությունների մատուցում հստակ որոշված համայնքներում, իրականացվել են չնախատեսված համայնքներում և գլխավորապես միջազգային կամ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ, ինչը կարող է վկայել այն մասին, որ միջոցառումներն իրականացվել են ոչ թե ըստ գնահատված կարիքի, այլ, ըստ ամենայնի, հասարակական և/կամ միջազգային կազմակերպությունների առաջնահերթությունների ու ծրագրային նպատակների:

Որոշ միջոցառումներ կատարվել են հընթացս՝ առանց կարիքի անհրաժեշտ համալիր գնահատման:

Չի իրականացվել միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման միջոցառումը, որը գնահատելու էր սահմանված միջոցառումների իրականացումն ու նպաստեր դրանց արդյունավետ իրականացմանը:

Գերակայությամբ նախատեսված երեք միջոցառում չի իրականացվել՝ լիազորող նորմի բացակայությամբ պայմանավորված (8, 9, 13): Այս առումով անհասկանալի է միջոցառումների նախատեսումը դրանց իրականացման հիմքերի բացակայության պայմաններում՝ առանց այդ հիմքերն ապահովող միջոցառումներ նախատեսելու: Ավելին՝ 5 տարվա ընթացքում իրավական դաշտում այդպես էլ չեն ձևավորվել անհրաժեշտ հիմքերը:

Գերակայություն 2: Տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, տնտեսական անկախության և արժանապատվության պահպանում

Գերակայության շրջանակներում նախատեսված երեք միջոցառումներից երկուսը չեն կատարվել, երրորդը կատարվել է մասամբ: Թեև տարեց անձանց իրազեկման աշխատանքներ են տարվել, այնուամենայնիվ դրանք եղել են ոչ արդյունավետ: Նախատեսվել է «55 և ավելի տարիքային խմբերում միզասեռական համախտանիշի, օստիոպարոզի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, այդ թվում՝ կրծքագեղձի վաղ ախտորոշման, սկրինինգային ծրագրերի իրականացում և հայտնաբերված ախտաբանությունների անվճար բուժման կազմակերպում» միջոցառումը, սակայն Հանրապետության միայն 55-60 տարեկան կանայք են հնարավորություն ունեցել անցնել ՊԱՊ, իսկ կրծքագեղձի մամոգրաֆիկ հետազոտություն՝ միայն Լոռու մարզի 55-69 տարեկան կանայք: Միզասեռական համախտանիշի և օստեոպարոզի վաղ հայտնաբերման և բուժման սքրինինգային ծրագրեր առհասարակ չեն իրականացվել: Չեն ստեղծվել նաև ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեց անձանց համար:

Գերակայություն 3: Տարեց մարդկանց՝ համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում

Գերակայության ներքո աշխատանքներ են իրականացվել տարեց անձանց ներուժի գնահատման և օգտագործման, մշակութային և համայնքային կյանքին մասնակցության ապահովման, ստեղծագործական գործունեության խթանման ուղղությամբ: Այնուամենայնիվ, որոշ գործողություններ համակարգված և թիրախային չեն եղել, կամ չեն համապատասխանել հոչակված արդյունքին: Մասնավորապես՝ միջոցառումներից մեկով նախատեսված էր ստեղծել լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարան, սակայն նախարարությունը հղում է անում դեռևս 2015 թ.-ին ընդունված որոշմանը, որով սահմանվում է ուսուցման ազգային ռեեստրը: Այսինքն՝ ենթադրաբար կա՛մ շտեմարանն արդեն իսկ ստեղծված էր, և այդ դեպքում անհասկանալի է տվյալ միջոցառման ձևակերպումը, կա՛մ որոշման մեջ հիշատակվող ուսուցման ազգային ռեեստրն այլ հասկացություն է, և այդ դեպքում միջոցառումը նախատեսված շտեմարանը չի ստեղծվել:

2020 թ. փետրվարի 10-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները ստորագրել են հուշագիր, համաձայն որի՝ կենսաթոշակառուներին մշակութային օջախներ այցելելու նպատակով կտրամադրվեն անվճար տոմսեր: Յուրաքանչյուր կենսաթոշակառու տարին 3 անգամ հնարավորություն ունի այցելելու իր նախընտրած յուրաքանչյուր թատերահամերգային կազմակերպություն, իսկ թանգարաններ՝ ամիսը 2 անգամ¹⁸: Նախաձեռնությունը ողջունելի է, այնուամենայնիվ դրա հասանելիությունը մարզի բնակիչների համար խնդրահարույց է, քանի որ նրանք պետք է հոգան միջմարզային տեղափոխության ծախսը: Օրինակ՝ 15 թատրոններից 11-ը Երևանում են, մեկական թատրոն՝ Գյումրիում, Վանաձորում,

¹⁸ Տե՛ս Կենսաթոշակառուներին և հաշմանդամություն ունեցող անձանց պետական թատրոններ և թանգարաններ այցելելու անվճար տոմսեր կտրամադրվեն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.mlsa.am/?p=24996>

Արտաշատում և Գորիսում¹⁹: Ըստ այդմ, տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ուղղությամբ ձեռնարկված գործողությունները նախ սահմանված ժամանակում չեն մեկնարկել, իրականացումն էլ ամբողջական չէ:

Լիարժեք չի իրականացվել նաև համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովումը: Այս միջոցառման ներքո կատարված աշխատանքները մեծապես ուղղված էին տարեց անձանց մեծարման միջոցառումների կազմակերպմանը, մինչդեռ ակտիվ մասնակցության ապահովմանն ուղղված ավագների խորհուրդներ ստեղծվել են միայն որոշ մարզերի որոշ համայնքներում, թեև նախատեսվում էր 5 տարիների ընթացքում խորհուրդներ ստեղծել բոլոր համայնքներում:

Գերակայություն 4: Տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Գերակայության շրջանակներում սահմանվել է մեկ միջոցառում, որի իրականացումը գնահատվել է որպես կատարված: Մասնավորապես՝ մշակվել և իրականացվել են վերապատրաստման ծրագրեր խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող մասնագետների համար:

Թեև թվային առումով միջոցառումը կատարվել, անգամ գերակատարվել է, այնուամենայնիվ խիստ կարևոր է վերապատրաստման միջոցառումների արդյունավետության գնահատումը: Բացի դրանից՝ հաշվի առնելով հատկապես ոչ համարժեք վարձատրությամբ պայմանավորված բավարար թվով և անհրաժեշտ հմտություններով մասնագետներ ներգրավելու խնդիրը՝ խիստ կարևոր է ընդունվող կադրերի առաջնային պատրաստման գործընթացի պատշաճ կազմակերպումը:


Գերակայություն 5: Տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում

Այս գերակայության շրջանակներում նախատեսվել է մեկ միջոցառում, որը չի կատարվել: Մասնավորապես չեն ապահովվել տարեց անձանց՝ աշխատանքային կյանքում առավել երկար մնալու իրավական հիմքերն ու կարգավորումները :

Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի կատարողականը թվերով

Միջոցառումների գնահատումը վկայում է, որ դրանց զգալի մասն ուղղակի չի կատարվել: Նախատեսված 24 միջոցառումներից կատարվել է 5-ը (20.7%-ը), կատարվել է մասամբ 8-ը (33.3%), չի կատարվել 11-ը (45.8%):

¹⁹ Տե՛ս Թատերարվեստի ոլորտ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://escs.am/am/static/theatrical-art?s=culture>



Ինչ վերաբերում է առանձին գերակայությունների կատարողականին, նշենք, որ

- առաջին գերակայությունը կատարվել է 15.4%-ով, մասամբ է կատարվել 30.8%-ով, չի կատարվել 53.8%-ով
- երկրորդ գերակայությունը կատարվել է մասամբ 33.3%-ով, չի կատարվել՝ 66.7%-ով
- երրորդ գերակայությունը կատարվել է 33.3%-ով, կատարվել է մասամբ 50%-ով, չի կատարվել 16.7%-ով
- չորրորդ գերակայությունը կատարվել է 100%-ով
- հինգերորդ գերակայությունը չի կատարվել 100%-ով (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ըստ Գերակայությունների միջոցառումների թիվն ու դրանց իրականացումը

Գերակայություններ	Միջոցառումների թիվը	Գնահատումը
Գերակայություն 1: Խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման գործող համակարգի բարելավում	13	Կատարվել է՝ 2 Կատարվել է մասամբ՝ 4 Չի կատարվել՝ 7
Գերակայություն 2: Տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, տնտեսական անկախության և արժանապատվության պահպանում	3	Կատարվել է մասամբ՝ 1 Չի կատարվել՝ 2
Գերակայություն 3: Տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում	6	Կատարվել է՝ 2 Կատարվել է մասամբ՝ 3 Չի կատարվել՝ 1
Գերակայություն 4: Տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող	1	Կատարվել է՝ 1

մասնագետների պատրաստում և վերապատրաստում		
Գերակայություն 5: Տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում	1	Չի կատարվել՝ 1

Եզրակացություն

2017 թ. ընդունվեց Հայաստանի Հանրապետությունում տարեց անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը»: 5 տարվա ընթացում Միջոցառումների ծրագիրն իրականացվել է 21 տոկոսով:

Մտահոգիչ է պետության ոչ հետևողական վերաբերմունքը ոլորտին: Օրինակ՝ համադրելով սույն Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը նոր՝ տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագրի ու ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների՝ 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցի հետ, կարող ենք փաստել, որ տարեցների խնդրի նկատմամբ մոտեցումների փոփոխության անհրաժեշտությունը մնում է օրակարգային: Նոր ծրագրում չի կատարվել նախորդ հայեցակարգային փաստաթղթերի վերլուծություն, կատարողականի գնահատում, ինչը քաղաքականության հաջողության կարևոր տարրերից է:

Արձանագրվել են նաև գերատեսչությունների միջև պատշաճ համագործակցության, տեղեկությունների պատշաճ հավաքագրման, մշտադիտարկման, հաշվետվողականության բացակայության խնդիրներ:

Ոլորտի գլխավոր պատասխանատու գերատեսչության՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ տարեցների իրավունքների ապահովման և համայնքային ծառայությունների ստեղծման ուղղությամբ վերջին տարիների գործողությունները եղել են ավելի շատ հընթացս կամ պայմանավորված համայնքում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների ծրագրերով:

Թեև ոլորտի բարեփոխման թիրախներից մեկը տարեցների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումներին հակադրելն է, սակայն շարունակվում են օրակարգ բերվել խտրականությունը խորացնող նախաձեռնություններ: Մասնավորապես՝ 2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակատուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառումը ներկայացվում է որպես սոցիալական բաղադրիչ ունեցող, մինչդեռ այս ծրագիրն անհավասար պայմաններ է ստեղծում կանխիկ և անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացող տարեցների, զավակներ ունեցող և միայնակ տարեցների,

քաղաքաբնակ և գյուղաբնակ տարեցների միջև: Այսինքն՝ եթե մեծ հավանականությամբ քաղաքում բնակվող, զավակներ ունեցող 65-ամյա թոշակառուն կարող է օգտվել այս ծրագրից, ապա գյուղաբնակ միայնակ 80-ամյա տարեցը հավանաբար չի ունենա այդ ծրագրից օգտվելու հնարավորություն: Բացի դրանից՝ ծրագրին միացել է միայն 3 բանկ (ՎՏԲ, Արդշինբանկ և Հայբիզնեսբանկ): Հայաստանում և հատկապես գյուղական համայնքներում ոչ բոլոր առևտրի կետերն են համալրված անկանխիկ վճարումներ ընդունելու սարքավորումներով, ոչ բոլոր համայնքներն են համալրված բանկոմատներով (օրինակ՝ ինչպես նշվում է «Ազատություն» ռադիոկայանի հրապարակման մեջ, Արագածոտնի մարզի Ափնագյուղ գյուղում որևէ բանկոմատ չկա²⁰): Այսինքն՝ նույնիսկ ապահովված չէ ծրագրով նախատեսված հնարավորության լիարժեք հասանելիությունը:

Խնդրահարույց է նաև համայնքներում ծառայությունների ներդրման հարցը և դրանց ֆինանսավորումը: Ռազմավարական փաստաթղթերով համայնքային ծառայությունների ներդրման միջոցառումներ են սահմանվում, սակայն կամ չեղարկվում են լիազորող նորմի բացակայության հիմքով, կամ չեն իրականացվում: Ավելին՝ համայնքային ծառայություններ ստացողների թիվը նվազեցվում է, ավելացվում է հաստատություններին տրվող ֆինանսավորման չափը²¹:

Նման նախաձեռնությունները չեն բխում տարեցների իրավունքների ապահովման միջազգային չափանիշներից և ավելի շատ դառնում են ինքնանպատակ, ոչ թե տարեցների իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառում:

Առաջարկություններ

- Ապահովել տարեցների իրավունքների և իրավիճակի բարելավման քաղաքականության շարունակականությունն ու հետևողականությունն այն իրականացնելիս
- Ապահովել համագործակցությունը ոլորտի պատասխանատու գերատեսչությունների միջև
- Ապահովել ոլորտին վերաբերող տեղեկատվության պատշաճ հավաքագրումն ու փոխանցումը
- Ապահովել միջոցառումների և քաղաքականությունների իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողությունը, այն է՝ դրանց մշտադիտարկումը, պարբերաբար գնահատումը և արդյունքների վերաբերյալ հանրության իրազեկումը

²⁰ «Քարտը Երևանի բնակիչներին է ձեռնտու». գյուղաբնակ թոշակառուները ոգևորված չեն կառավարության նոր ծրագրից, հոդված, 30 հունիս 2022 թ., Ազատություն ռադիոկայան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/31923366.html>

²¹

<https://www.facebook.com/musheghh/posts/pfbid0zU65XTzPa9xmcMMLGjMGPurLQwm94SrwWbzTJuSSFSQY7X2ZAPk7t6QmoNCVXEdJI>

- Ոլորտին վերաբերող քաղաքականության փաստաթղթերը մշակելիս հաշվի առնել միջազգային չափանիշները, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններն ու ռազմավարական ուղղությունները
- Առավել մեծ ուշադրություն դարձնել առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովմանը, հնարավոր առողջական խնդիրների կանխմանը
- Ապահովել հավասար հնարավորություններ տարեց անձանց համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատուկ կարիքներն ու պահանջմունքները
- Ապահովել երկարատև խնամքի ապահովման ժամանակակից և միջազգային չափանիշներին համապատասխանող մեխանիզմներ
- Կիրառել զգայուն, չխարանող բառապաշար

Հավելված. Գնահատումն ըստ առանձին միջոցառումների

Գերակայություն 1: Խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման գործող համակարգի բարելավում

Գերակայություն 1-ի միջոցառումների գնահատումը

N	Միջոցառումը	Իրականացումը
1	Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում	Չի կատարվել
2	Հանրապետությունում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված փորձնական ծրագրերի իրականացում	Չի կատարվել
3	Տարեցներին մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքի ապահովում	Կատարվել է մասամբ
4	Տարեցներին մատուցվող տնային խնամքի սոցիալատոջապահական համայնքի ծառայությունների ներդրում	Չի կատարվել
5	Տարեցների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ըստ նրանց գնահատված կարիքների	Կատարվել է մասամբ
6	Միջհամայնքային տրանսպորտային սպասարկման բարելավում	Կատարվել է մասամբ
7	Տարեցների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում խնամքի, ինչպես նաև ցերեկային կենտրոններում վճարովի և համավճարի սկզբունքով ծառայությունների տրամադրման մեխանիզմների սահմանում	Կատարվել է
8	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրման իրավական հիմքերի ու մեխանիզմների ստեղծում	Չի կատարվել
9	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրում	Չի կատարվել
10	Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական մեխանիզմների մշակում և ՀՀ-ում գործող պետական և հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում	Կատարվել է մասամբ
11	Տարեց և կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառում	Կատարվել է
12	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու	Չի կատարվել

	պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրություն	
13	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծում, փորձնական ծրագրի մշակում և իրականացում	Չի կատարվել

1. Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում

- **Պատասխանատու՝ ԱՍՀՆ**
- **Կատարման ժամկետ՝ 2017 թ. հունիսի 18**
- **Ակնկալվող արդյունքները՝** Ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի կատարմանն ուղղված աշխատանքների համակարգում
- **Արդյունքային ցուցանիշները՝** Կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» N 20-Ա որոշման մեջ

Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծումը Միջոցառումների ծրագրի կատարմանն ուղղված աշխատանքների համակարգման նպատակ ունի: Դրանով էր պայմանավորված նաև այս գործողության իրականացման ժամկետը Ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո մեկամսյա ժամկետում սահմանելը: Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին որոշումը, սակայն, ընդունվել է սահմանված ժամկետից 4 տարի ուշացումով և այլ նախագծի շրջանառման արդյունքում:

Մասնավորապես՝ 2021 թ. մայիսի 24-ին հաստատվել է ՀՀ վարչապետի N 535-Ա որոշումը «Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թ. հունվարի 17-ի N 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»²²: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ այս որոշման ընդունման անհրաժեշտությունը բխել է ոչ թե Ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսված պահանջից, այլ «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների 2020-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի շրջանառումից:

Նախարարության տեղեկացմամբ՝ Միջոցառումների ծրագրի իրականացման համակարգմամբ զբաղվել է ՀՀ վարչապետի 2013 թ. N 20-Ա որոշմամբ ստեղծված

²² Տե՛ս ՀՀ վարչապետի N 535-Ա որոշումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152934>

հանձնաժողովը, որը 2019-2020 նիստեր չի գումարել հետևյալ հիմնավորմամբ՝ «Քննարկվել են խնամքի չափորոշիչների վերանայման, ծառայությունների որակի բարելավման հարցեր, տարբեր իրավական ակտերի նախագծեր և այլն, դրանով, նաև համապատասխան մարմինների ղեկավար կազմի հաճախակի փոփոխություններով պայմանավորված»: Այդ ժամանակահատվածում տարեցների հիմնահարցերը քննարկվել են Տարեցների պաշտպանության ցանցում: Նաև տեղեկացվել է՝ «Նկատի ունենալով, որ ինչպես 2013, այնպես էլ 2017 թվականից հետո Հանձնաժողովն ուներ որոշակի առաքելություն, այն է՝ նպաստել կոնկրետ նշված ռազմավարական փաստաթղթերում ամրագրված գործողությունների կատարմանը, իսկ այժմ փոխվել են մոտեցումներն ու տարեցներին մատուցվող ծառայությունների իրավական կարգավորումները, Հանձնաժողովի աշխատանքների շարունակականության ապահովումը նպատակահարմար չէ»:

Նշենք, որ անձանց փոփոխությամբ պայմանավորված Հանձնաժողովի աշխատանքի ձախողումը չի կարող համարվել արդարացված հիմնավորում: Բացի դրանից՝ անհասկանալի է, թե ինչու չի վերանայվել տվյալ միջոցառումը՝ համապատասխանեցնելով այն փոփոխված մոտեցումներին և իրավական կարգավորումներին: Ավելին՝ Ցանցը, որին հղում է անում նախարարությունը, համաձայն Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի ֆեյսբուքյան հրապարակման²³, ձևավորվել է 2016 թ. և 2020 թ. փետրվարի 13-ի դրությամբ: Ցանցի անդամ կազմակերպություններն էին Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիան, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Հայկական Կարիտասը, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն և «Կողքիդ եմ» ՀԿ-ն: Այսինքն՝ որևէ պետական մարմնի ներկայացուցիչ ներգրավված չէ մարմնում, որին վերապահվել էր տարեցների խնդիրների քննարկումը:

Բացի դրանից, որ հանձնաժողովը չի ստեղծվել սույն Ռազմավարության շրջանակում, 2021 թ. որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, որը սահմանում է նաև միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը, հանձնաժողովի անդամ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական Մամվել Կարաբեկյանը, համաձայն հայտարարագրերի ռեեստրի, 2021 թ. հուլիսի 1-ի դրությամբ դադարեցրել է իր պաշտոնական լիազորությունները, սակայն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, ինչը փաստում է պատասխանատու գերատեսչությունների անհետևողական մոտեցումը:

²³ <https://www.facebook.com/ahaop/photos/ալսուր-կայացավ-տարեցների-պաշտպանության-ցանցի-հերթական-հանդիպումը-որի-համակարգող-ը/1081497335535331/>

Հավելված N 1
 ՀՀ վարչապետի
 N 535-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՄԻՋՁԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տաթևիկ Ստեփանյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Քնար Ղոնյան	- ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ
Լուսինե Սիմոնյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տնտեսական և կառավարման վարչության պետ
Սամվել Կարաբեկյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
Լուսինե Հովհաննիսյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ (համաձայնությամբ)
Աննա Հովհաննիսյան	- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Արթուր Թորոսյան	- Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)
Քրիստինե Իսախրյան	- Հայկական Կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ալլա Հարությունյան	- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ֆլորա Սարգսյան	- «Հայկական Կարիտաս» ԲՀԿ ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Քրիստինա Հովհաննիսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար):

Դիտում առ 08.08.2022 թ.

Ստացված տեղեկատվությունից կարող ենք եզրահանգել, որ Միջոցառումների ծրագրում պլանավորած Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարևոր՝ Միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով նախատեսված գործողության արդյունքը չի իրականացվել անհասկանալի պատճառներով:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

2. Հանրապետությունում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված փորձնական ծրագրերի իրականացում

- **Պատասխանատու`** ԱՍՀՆ, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզպետարաններ, համայնքապետարաններ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ`** 1) 2018 թ., 2) 2019 թ., 3) 2019 թ., 4) 2021 թ.
- **Ակնկալվող արդյունքները`** Տարեցների իրական կարիքների լիարժեք ու բազմակողմանի գնահատման հիման վրա այլընտրանքային ծառայությունների տրամադրման հնարավորությունների ապահովում, մասնավորապես` հետևյալ փորձնական ծրագրերի իրականացում.
 - Սոցիալական օգնականի ծառայության ներդրում
 - «Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոնի» ստեղծում
 - Տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայություն` ըստ տարեցի գնահատված կարիքների
 - համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում
- **Արդյունքային ցուցանիշները`**
 - Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան և Մեղրի համայնքներում սոցիալական օգնականի ծառայությունից կօգտվի 24 տարեց
 - Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում կստեղծվի «Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոն», որի ծառայություններից կօգտվի 20 տարեց
 - Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ և Վայոց ձորի մարզի Վայք և Եղեգնաձոր համայնքներում տնային պայմաններում շուրջօրյա խնամքի ծառայություն կստանա առնվազն 30 անկողնային հիվանդ տարեց անձ
 - Տավուշի մարզի մեկ ընտրված համայնքում համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում առնվազն 10 տարեցի համար

Հայտարարագրված արդյունքային ցուցանիշներից ոչ մեկը չի կատարվել սահմանված ժամկետներում, թեև այս նույն մոդելները պետք է փորձարկվեին դեռևս 2015-2019 թթ. Միջոցառումների ծրագրով²⁴: Որոշ միջոցառումներ իրականացվել են սկսած 2020 թվականից:

Այսպես` 2020 թ. **Եղեգնաձոր** համայնքում Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը, Շվեցարական Կարմիր Խաչի հետ համագործակցությամբ, իրականացրել է «Համայնքային ինտեգրված տնային խնամք և ակտիվ ծերացում» ծրագիրը, որի շրջանակներում տնային խնամքի ծառայություն է մատուցվել 30 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց: Ծրագրի շրջանակներում **Վայոց ձորի** մարզում նաև ստեղծվել են տարեցներից կազմված 2 նախաձեռնող խմբեր: Նշենք, որ այդ ծառայությունները, ըստ Տավուշի մարզպետարանի, մատուցվել են «ոչ անկողնային հիվանդ» տարեցների (միջնդեռ Միջոցառումների ծրագրի արդյունքային ցուցանիշով ծառայությունը նախատեսված էր տրամադրել «առնվազն 30 անկողնային հիվանդ տարեց անձանց»):

²⁴ 2018 թ. գնահատվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թ. սեպտեմբերի 18-ին հաստատված Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգի և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի գնահատման արդյունքները հասանելի են հետևյալ հղմամբ` <https://drive.google.com/file/d/1EQL7MP6A0RKgdFfTRqdU8h50ISGOak5p/view>

Դրամաշնորհի տրամադրման միջոցով՝ մրցույթում հաղթած կազմակերպությունները, մասնավորապես, ցերեկային խնամքի ծառայություններ են տրամադրել Երևան քաղաքում, Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի և Սյունիքի մարզերում: Տնային խնամքի ծառայություններ են տրամադրվել Երևան քաղաքում, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի, Սյունիքի, Լոռու, Արմավիրի, Վայոց ձորի, Արագածոտնի և Տավուշի մարզերում: Ընդհանուր առմամբ, դրամաշնորհի տրամադրման պայմանագրով մրցույթում հաղթած 10 հասարակական կազմակերպություններ ծառայություններ են մատուցել շուրջ 4000 շահառուի:

Ըստ **Վայոց ձորի մարզպետարանի՝ 2020 թ.** մարտ ամսից «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցացիան», ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ, տնային խնամքի ծառայություն է մատուցել Վայք քաղաքում բնակվող 65 և ավել տարիքի խոցելի տարեցների, 18 և ավել տարիքի հաշմանդամություն ունեցող 75 անձի: 2020 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին շահառուների թիվը հասել է 80-ի: Աջակցություն է տրամադրվել նաև Արցախի Հանրապետությունից Վայքում ժամանակավորապես ապաստանած 50 քաղաքացու: Հարկ է նաև նշել, որ Վայոց ձորի մարզպետարանը 2021 թ. տեղեկացրել է, որ մարզում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված փորձնական ծրագրերը գտնվում են քննարկման փուլում, նախատեսվում են իրականացնել առաջիկա տարիների ընթացքում:

Տավուշի մարզի Բերդ, Իջևան, Նոյեմբերյան, Այրում և մի շարք այլ գյուղական սահմանամերձ համայնքներում Հայկական Կարմիր Խաչի, Հայ օգնության ֆոնդի Բերդի գրասենյակի, Հայ Ավետարանչական եկեղեցու և այլ միջազգային ու նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ սոցիալական աջակցություն են ստացել մոտ 50 տարեց անձինք:

Ինչ վերաբերում է համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծմանը, նախարարությունը տեղեկացրել է, որ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում է ձեռք բերվել առանձնատուն, որը նախատեսվում է վերանորոգել 2022 թ.:

Վերը նշված տեղեկատվությունից կարող ենք եզրահանգել, որ միջոցառումներն իրականացվել են ոչ թե ըստ հայտարարագրված արդյունքների, այլ, ըստ ամենայնի, հասարակական և/կամ միջազգային կազմակերպությունների առաջնահերթությունների և ծրագրային նպատակների: Դրա մասին է փաստում, մասնավորապես, ծառայությունների չտրամադրումն արդյունքային ցուցանիշներում նշված համայնքներում և դրանց տրամադրումը միջոցառմամբ չնախատեսված համայնքներում:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

3. Տարեցներին մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքի ապահովում

- **Պատասխանատու՝ ԱՍՀՆ**
- **Կատարման ժամկետ՝ 2018 թ.**
- **Ակնկալվող արդյունքները՝** Տարեցների խնամքի հաստատություններում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) մատուցվող ծառայությունների կանոնակարգում, խնամքի գործող չափորոշիչների վերանայում (գործող օրենսդրական ակտերի, խնամքի չափորոշիչների վերանայում, նոր ընթացակարգերի, մեթոդական ցուցումների ընդունում և այլն)
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ կառավարության որոշում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման

Սույն գործողության իրականացման նպատակով նախարարությունը նախաձեռնել է երեք իրավական ակտերի մշակման և ընդունման աշխատանքներ: Առաջինը վերաբերում էր ՊՈԱԿ-ներին՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն ընձեռելուն²⁵, երկրորդը՝ այդ գործունեության արդյունքում իրականացվող ծախսերի տարանջատմանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից²⁶, և երրորդը՝ հասարակական դիտորդական խմբի ստեղծմանը²⁷: Հավելենք, որ սույն իրավական ակտերի վերաբերյալ տեղեկությունը տրամադրվել է նաև 7-րդ միջոցառման վերաբերյալ այն դեպքում, երբ այս և 7-րդ միջոցառման ակնկալվող արդյունքները տարբեր են:

Նշենք, որ միջոցառման ակնկալվող արդյունքում մատուցվող ծառայությունները պետք է կանոնակարգվեին, և խնամքի չափորոշիչները պետք է վերանայվեին տարեցների խնամքի հաստատություններում՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից: Մինչդեռ միջոցառման շրջանակում կատարված գործողությունները վերաբերում են միայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին: Միջոցառման արդյունք է նշված նաև խնամքի հաստատություններում արդեն իսկ առկա ծառայությունների կանոնակարգումը,

²⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթի օգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 15.02.2018 թ. N163-Ն որոշում հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119955>

²⁶ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.06.2018 թ. N 69-Ա/1 հրամանով սահմանվել է նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արդյունքում իրականացվող ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից տարանջատելու և հաշվետվությունների ներկայացման կարգը

²⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը հաստատելու մասին» 2018 թ. հոկտեմբերի 16-ի N 112-Ա/1 հրամանը՝ https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf?fbclid=IwAR1iQeOoPDDt5Q4OwJKWxNzRXy_UeEN7ljBLTdBzecreCK5qYhv4bBcLEfs

գործող չափորոշիչների վերանայումը և այլն: Ակնկալվող արդյունքներն այս մասով չեն ապահովվել՝ գործող օրենսդրական ակտերը, խնամքի չափորոշիչները չեն վերանայվել, նոր ընթացակարգեր, մեթոդական ցուցումներ չեն ընդունվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

4. Տարեցներին մատուցվող տնային խնամքի սոցիալ-առողջապահական համալիր ծառայությունների ներդրում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, համայնքապետարաններ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2018 թ.
- **Ակնկալվող արդյունքները՝** ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կներդրվի տարեցների տնային խնամքի սոցիալ-առողջապահական ծառայությունների ինտեգրված մոդել
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տնային խնամքի համալիր ծառայություններից կօգտվի շուրջ 200 տարեց

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ սույն գործողության իրականացման շրջանակներում Շվեյցարական Կարմիր Խաչի և Սոնակոյի Կարմիր Խաչի կողմից ֆինանսավորվող «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի շրջանակում Շիրակի և Լոռու մարզերում իրականացվել է 120 միայնակ տարեցի տնային խնամք: 2020 թ. այդ թիվը հասել է 200-ի:

Համաձայն Հայկական Կարմիր Խաչի ընկերության 2018 թ. տարեկան հաշվետվության՝ թեև շահառուների թիվը 120 է, սույն ծառայությունը նախատեսված է ոչ միայն տարեց, այլ նաև քրոնիկ հիվանդություններ և հաշմանդամություն ունեցող անձանց համար²⁸: 2020 թվականի ավարտին ծրագրում ներառվել է 472 շահառու, որից 93-ը՝ անվճար, 379-ը համավճարով²⁹:

Ինչ վերաբերում է ինտեգրված մոդելին, ապա «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագիրը մեկնարկել է դեռևս 2016 թվականին՝ Հայկական Կարմիր Խաչի ընկերության ֆինանսավորմամբ³⁰: Սույն միջոցառմամբ մինչդեռ ակնկալվում էր, որ մոդելը պետք է ներդրվեր պետության կողմից, որը պետք է ֆինանսական աջակցություն ստանար համայնքային բյուջեից: Կարող ենք արձանագրել, որ 2018 թ. և հետագայում նախատեսվող ծառայությունը չի ներդրվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

²⁸ Տե՛ս Տարեգիր 2018, էջեր 19-20, Հայկական կարմիր խաչի ընկերություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.redcross.am/resources/redcross/pdf/7129d7c0491b07819b1e078dc013a93f.pdf>

²⁹ Տե՛ս Տարեգիր 2020, էջեր 21-22, Հայկական կարմիր խաչի ընկերություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.redcross.am/resources/redcross/pdf/60de78ee141c3dc40b56da7d40123c23.pdf>

³⁰ Ծրագրի մեկնարկի մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թ. հրապարակումը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.mlsa.am/?p=8254>

5. Տարեցների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ըստ նրանց գնահատված կարիքների

- **Պատասխանատու՝** մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Մարզպետարանների և համայնքապետարանների կողմից կգնահատվեն տարեցների կոմունալ-կենցաղային պայմանները, և դրան համապատասխան կտրամադրվի աջակցություն, մասնավորապես՝ բնակարանների, կենցաղային տեխնիկայի, սանհանգույցների վերանորոգում, ջեռուցման հետ կապված խնդիրների լուծմանն աջակցություն և այլն)
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կողմից յուրաքանչյուր մարզի առնվազն 5 համայնքում բնակվող շուրջ 100 տարեց կատանա համապատասխան աջակցություն

Սույն գործողության իրականացման նպատակով առաջին հերթին ակնկալվում էր կարիքի գնահատում իրականացնել: 2021 թ. մարզպետարաններից երեքը կազմակերպության հարցմանը պատասխանել են, որ կարիքի գնահատում չի եղել, երեքը նշվածի վերաբերյալ տեղեկատվություն չեն տրամադրել, մյուս չորսը նշել են կարիքը գնահատելու մասին, թեև գնահատման արդյունքների մասին տեղեկատվություն չեն տրամադրել: Վերջիններս մասնավորապես տեղեկացրել են, որ կարիքները պարբերաբար և անհրաժեշտության դեպքում գնահատել են համայնքների սոցիալական աշխատողները:

Թեև միջոցառման շրջանակներում թիրախային կարիքի գնահատում չի իրականացվել, հարկ է նշել, որ տարեց անձանց տարբեր համայնքներում տրամադրվել է աջակցություն: Այսպես՝

Արագածոտնի մարզում 2017-2020 թթ. կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ դրամական աջակցություն է տրամադրվել 120 տարեցի: 2021 թ. աջակցություն չի տրամադրվել, քանի որ նախորդ տարիներին այն հիմնականում բարեգործական կազմակերպությունների ծրագրերի արդյունք է եղել, իսկ դրանք ավարտվել են:

Սյունիքի մարզում թեև 2017-2020 թթ. կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ միջոցառումներ չեն իրականացվել կարիքի գնահատման մեթոդաբանության և պետական բյուջեից ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, 2021 թ. մարզպետարանը և մարզի համայնքապետարանները տարեցներին ցուցաբերել են մոտ 23 միլիոն դրամ օգնություն բնակարանային պայմանների բարելավման և ջեռուցման համար, իսկ Կապանի համայնքապետարանը միայնակ ապրող 71 տարեցի հատկացրել է վառելափայտ (յուրաքանչյուրին 1-2 մետր խորանարդ), ևս 5 համայնքներում տարբեր աջակցություններ են տրամադրվել 65 տարեցի:

Վայոց ձորի մարզում 2018-2020 թթ. վերանորոգվել են բնակարանների տանիքներ, բարեկարգվել և կառուցվել են կոյուղագծեր, ասֆալտապատվել է քաղաքների բակերի մեծ մասը, տեղադրվել են նստարաններ և զրուցարաններ: Մարզպետարանը և համայնքապետարանները դրամական օգնություն և վառելափայտ են տրամադրել:

Ջերմուկի համայնքապետարանը մեկ տարեցի ընտանիքի տրամադրել է անհատական ջեռուցման սարք , կատարվել են տեղադրման աշխատանքներ: 2021 թ. ընթացքում մարզում աջակցություն է տրամադրվել 1237 տարեցի, որը ներառել է հագուստ, սնունդ, վառելափայտ, ֆինանսական և այլ աջակցություն: Տարեցներին տարբեր կոմունալ-կենցաղային աջակցություն են տրամադրել նաև միջազգային կազմակերպությունները:

Տավուշի մարզում 2018-2020 թթ. գրեթե բոլոր համայնքներում միայնակ տարեցներին պարբերաբար ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն, տրամադրվել է վառելափայտ: Մի շարք համայնքներում իրականացվել են նաև այլ բնույթի միջոցառումներ: Օրինակ՝ Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան և Այրում համայնքներում, գյուղական բնակավայրերում համայնքապետարանները, համագործակցելով մարզպետարանի, տեղում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ, աջակցել են տարեցներին առողջական խնդիրների լուծման հարցում, նվերներ են տրամադրվել, և հոգացել նրանց որոշ կենցաղային կարիքներ: 2021 թ. Բերդ և Իջևան համայնքներում ֆինանսական աջակցություն է տրամադրվել ավելի քան 75 տարեց անձի:

Լոռու մարզում, ըստ 2021 թ. սկզբին ստացած տեղեկության, տարեց անձանց տրամադրվել է աջակցություն, այդ թվում՝ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից, սակայն մարզպետարանը տեղեկություն չի հայտնել աջակցություն ստացած անձանց թվի, օգնության տեսակի և ծավալի վերաբերյալ: 2021 թ. ընթացքում, համաձայն ստացված տեղեկատվության, աջակցություն է տրամադրվել մարզի տարբեր համայնքների 645 տարեց անձի:

Կոտայքի մարզում 2020 թ. դրամական աջակցություն է ցուցաբերվել մոտ 320 սոցիալապես անապահով տարեցի, նաև համայնքապետարանները սոցիալապես անապահով 16 տարեցի տրամադրել են վառելափայտի օգնություն: 2021 թ. ընթացքում, համաձայն համայնքներից ստացված տեղեկատվության, աջակցություն է տրամադրվել մարզի տարբեր համայնքների 492 տարեց անձի: Նշենք, որ 2021 թ.-ի համար մարզպետարանը կազմակերպությանը տեղեկացրել է, որ տվյալ գործողության վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում, և հարցը անհրաժեշտ է հասցեագրել համայնքներ:

Արարատի մարզպետարանը և համայնքապետարանները ֆինանսական աջակցություն են ցուցաբերել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, 100 տարին լրացած, սոցիալապես անապահով տարեցների, ինչպես նաև ընտանիքի տարեց անդամի հուղարկավորությունը կազմակերպելու համար, միջազգային և տեղական կազմակերպությունների ծրագրերի իրականացմանը: Տարեց անձանց ընտանիքներին տրվել են գույքահարկի, հողի հարկի արտոնություններ: Մասիս և Արտաշատ քաղաքների բարեգործական ճաշարաններում տարեցներն օրական մեկ անգամ ստացել են տաք սնունդ: 2021 թ. մարզի չորս համայնքներում ֆինանսական աջակցություն է տրամադրվել ավելի քան 204 տարեց անձի, տնային խնամքի և ցերեկային կենտրոնի ծառայություններ՝ Արտաշատում բնակվող 195 անձի:

Շիրակի մարզում 2018-2021 թթ. ընթացքում մարզպետարանը և համայնքապետարաններն աջակցություն են ցուցաբերել ավելի քան 1130 տարեց անձի: Հատկացվել են սոցիալական բնակարան, հանրակացարանային սենյակ, հագուստ, վառելափայտ, շինանյութ: Միջազգային կազմակերպությունները Գյումրի, Ախուրյան և Մարալիկ համայնքներում բժշկական և տնային խնամքի ծառայություններ են մատուցել: 2021 թ. ընթացքում մարզպետարանը կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար դրամական աջակցություն է տրամադրել մոտ 250 սոցիալապես անապահով տարեցի, մարզի տարբեր համայնքներում աջակցություն են ստացել 738 տարեց:

Արմավիրի մարզպետարանը դրամական աջակցություն է ցուցաբերել այն տարեցների ընտանիքներին, որոնք իրենց ընտանիքի անդամ հանդիսացող տարեցների երկարատև հիվանդության, բուժման կամ կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման խնդիրներով դիմում են ներկայացրել: Անհրաժեշտության դեպքում համայնքների ղեկավարներին նույնպես առաջարկվում է լրացուցիչ օժանդակություն տրամադրել համայնքի կարիքավոր տարեցներին: Մարզպետարանը և համայնքապետարանները 2017-2020 թթ. առնվազն 2760 տարեցի տրամադրել են համապատասխան աջակցություն: 2021 թ. ֆինանսական աջակցություն, ինչպես նաև հիգիենիկ պարագաներ, հագուստ, պարեն է ստացել տարբեր համայնքների 194 տարեց բնակիչ: Միջազգային կազմակերպություններն աջակցել են կենցաղային հարցերում՝ գնումներ, սննդի պատրաստում և այլն:

Գեղարքունիքի մարզպետարանը դրամական աջակցություն է ցուցաբերել բազմաթիվ սոցիալապես անապահով տարեցների՝ հագուստ և սննդամթերք ձեռք բերելու, ինչպես նաև սոցիալական այլ խնդիրներ կարգավորելու համար: 2021 թ. տարբեր համայնքներում աջակցություն են ստացել 629 տարեց բնակիչ:

Այսպիսով՝ թեև ՀՀ համայնքապետարանները և մարզպետարանները տարեց անձանց տրամադրել են տարբեր տիպի աջակցություն, կարող ենք եզրահանգել, որ ծրագրերն իրականացվել են հընթացս՝ առանց համայնքներում բնակվող տարեց անձանց թվաքանակի, նրանց խնդիրների ու կարիքի համապարփակ գնահատման, բարեգործական ծրագրերի շրջանակում (որոնց ավարտից հետո աջակցությունը դադարեցվել է): Բացի դրանից՝ տրամադրված ոչ բոլոր տեղեկություններն են համապատասխանել միջոցառման բովանդակությանը:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

6. Միջհամայնքային տրանսպորտային սպասարկման բարելավում

- **Պատասխանատու`** ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ`** 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները`** Միջհամայնքային երթուղիների ավելացման շնորհիվ տարեցների համար կապահովվի առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը
- **Արդյունքային ցուցանիշները`** Յուրաքանչյուր մարզում միջհամայնքային առնվազն երեք նոր երթուղու ստեղծում կամ առկա երթուղիների համալրում նոր տրանսպորտային միջոցներով

Միջհամայնքային երթուղու ստեղծումը ենթադրում է մարզի տարածքում երթուղիների ստեղծում: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության` 2017-2021 թթ. ընթացքում ստեղծվել են 20 երթուղիներ, սակայն դրանցից միայն 11-ն են միջհամայնքային: Միջհամայնքային երթուղիներ ստեղծվել են Վայոց Ձորի (5 երթուղի), Լոռու (3 երթուղի), Արարատի (2 երթուղի), Գեղարքունիքի (1 երթուղի) և Տավուշի (1 երթուղի) մարզերում և Երևանում (1 երթուղի դեպի Զվարթնոց օդանավակայան): Բոլոր երթուղիները, բացառությամբ Եղեգնաձոր-Գետափի (ստեղծվել է 2020 թ.), ստեղծվել են 2021 թ.: Այսինքն` միջոցառումը, որը պետք է իրականացվեր 5 տարվա ընթացքում պարբերաբար, իրականացվել է գլխավորապես վերջին տարում, և այն էլ` ոչ ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է երթուղիների համալրմանը, ապա, ըստ տրամադրված տեղեկության, որևէ համալրում չի համապատասխանում արդյունքային ցուցանիշի պահանջներին, այսինքն որևէ մարզում որևէ միջհամայնքային երթուղի չի համալրվել նոր տրանսպորտային միջոցներով:

Այսպիսով` 5 տարվա ընթացքում նախատեսված նվազագույնը 30 երթուղու մոտ 40 տոկոսն է ստեղծվել: Ընդ որում` թվարկված երթուղիների ստեղծումը չէր կարող էականորեն ազդել տարեց անձանց առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության վրա` հատկապես հաշվի առնելով միջհամայնքային տրանսպորտի անհասանելիության խնդրի ծավալները:

Միջոցառման իրականացումը գնահատվում է` կատարվել է մասամբ:

7. Տարեցների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում խնամքի, ինչպես նաև ցերեկային կենտրոններում վճարովի և համավճարի սկզբունքով ծառայությունների տրամադրման մեխանիզմների սահմանում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2018 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշման կիրարկման նպատակով իրավական հիմքերի ստեղծում, մեխանիզմների և ընթացակարգերի սահմանում
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Կառավարության 2016 թ. հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշմամբ վճարովի ծառայությունների տրամադրումը ևս համարվում է ձեռնարկատիրական գործունեություն: Դրանից ելնելով՝ Կառավարության 2018 թ. փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթի օգտագործման կարգը սահմանելու և Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N163-Ն որոշմամբ սահմանվել է համապատասխան կարգ: Իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թ. հունիսի 1-ի N 69-Ա/1 հրամանով սահմանվել է նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արդյունքում իրականացվող ծախսերը ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցներից տարանջատելու և հաշվետվությունների ներկայացման կարգը:

2020 թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ խնամքի ծառայություններ վճարովի հիմունքներով տրամադրվել են միայն «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Ձորակ» խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, մյուս խնամքի հաստատությունները, ինչպես շուրջօրյա, այնպես էլ տնային, վճարողի ծառայություններ չեն մատուցել, քանի որ պահանջարկ չի եղել, չնայած որ բոլոր ՊՈԱԿ-ների կանոնադրություններում կատարվել են համապատասխան փոփոխություններ, ինչը թույլ է տալիս նրանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու շրջանակներում շահառուներին մատուցել վճարովի ծառայություններ:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է:

8. Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրման իրավական հիմքերի ու մեխանիզմների ստեղծում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, ԱՆ, ՏԿԶՆ
- **Կատարման ժամկետ՝** 2019 թ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Տարեց անդամ խնամող ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու հետ կապված հարաբերությունների կանոնակարգում
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ կառավարության որոշում

2019 թ. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շրջանառել է երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծ, սակայն Կառավարությունն այն հետ է վերադարձրել օրենսդրության մեջ համապատասխան լիազորող նորմ չլինելու պատճառաբանությամբ: Լիազորող նորմ է նախատեսվել «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրինագծում, որն այդպես էլ չի հաստատվել:

Այսպիսով՝ երեք տարվա ընթացքում այդպես էլ իրավական դաշտում չի ձևավորվել անհրաժեշտ հիմքը միջոցառումը կատարելու համար, ինչի հետևանքով հնարավոր չի եղել նաև կատարել այս միջոցառումից բխող հաջորդ միջոցառումը: Փաստացի՝ բազմանդամ ընտանիքներում ապրող տարեցների խնդիրները կրկին անորոշ ժամանակով մնացել են չլուծված:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

9. Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, ԱՆ, ՏԿԶՆ
- **Կատարման ժամկետ՝** 2020 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** ՀՀ կառավարության սահմանած կարգով սոցիալական աջակցություն կտրամադրվի երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող ընտանիքներին
- **Արդյունքային ցուցանիշները՝** Կգնահատվեն և կհաշվառվեն ընտանիքները, կստանան համապատասխան աջակցություն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով

Սույն գործողության կատարման համար հարկավոր էր նախ ստեղծել 8-րդ միջոցառմամբ նախատեսված իրավական հիմքերն ու մեխանիզմները, որը սակայն չի իրականացվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

10. Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական մեխանիզմների մշակում և ՀՀ-ում գործող պետական և հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, մարզպետարաններ, համայնքապետարաններ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2018 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Կհստակեցվի և կկանոնակարգվի խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման գործընթացը, ինչպես նաև կքարտեզագրվեն նրանց մատուցվող ծառայությունները
- Ստացված տեղեկատվությունը հասանելի կլինի շահագրգիռ բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների համար
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման
- Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում կներկայացվեն առաջարկություններ պահանջարկ ունեցող, սակայն տարեցներին չմատուցվող ծառայությունների տրամադրման վերաբերյալ

Ըստ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրումն իրականացվել է 2019 թ. Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից: 2018 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը ստորագրել է «Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական ձևաչափ սահմանելու և Հայաստանի Հանրապետությունում գործող պետական, ոչ պետական և հասարակական կազմակերպությունների և նրանց կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը ի գիտություն ընդունելու մասին» N131-Ա/1 հրամանը³¹:

Նշյալ հրամանով կարգավորվում է ինչպես խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական ձևաչափը, այնպես էլ տեղեկություն և ներկայացված տարեցներին ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ծառայությունների վերաբերյալ: Անշուշտ, նման տեղեկությունը պետք է պարբերաբար թարմացվի և լրացվի, այնուամենայնիվ միջոցառման պատասխանատուն տեղեկացրել է միայն 2019 թ.-ի քարտեզագրման մասին: Եթե այն պետք է հիմք ծառայեր հրամանի համար, ապա պետք է կատարվեր 2018 թ.-ին, իսկ եթե առաջարկությունների համար, ապա քարտեզագրման արդյունքում առաջարկությունների ներկայացման մասին տեղեկատվություն կազմակերպությանը չի տրամադրվել: Կարող ենք հետևություն անել, որ առնվազն միջոցառման երկրորդ արդյունքային ցուցանիշը չի ապահովվել:

ՀՀ մարզպետարանները ևս գործողության իրականացման պատասխանատու են, սակայն վերջիններս տրամադրել են հիմնականում տարեց անձանց մատուցած ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն: Մարզպետարաններից մեկը հայտնել է, որ խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման մեթոդաբանություն մարզպետարաններին չի տրամադրվել: Մարզպետարաններից երկուսն էլ տեղեկացրել են,

³¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/2018%D5%A9.-131-A-1-hraman.pdf>

որ գործընթացը նախատեսած էր կանոնակարգել իրավական ակտով, սակայն հետագա ընթացքի մասին տեղեկատվության չեն տիրապետում: Սույն տեղեկատվությունը վառ օրինակ է նրա, որ Ռազմավարության իրականացման ընթացքում պատասխանատու մարմինների միջև բացակայել է կամ պատշաճ չի եղել համագործակցությունը և տեղեկատվության փոխանցումը, ինչը կարող էր բացասաբար անդրադառնալ գործողությունների իրականացման արդյունավետության և որակի վրա:

Միայն Վայոց ձորի մարզպետարանն է տեղեկացրել, որ կատարվել են խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և նրանց մատուցվող ծառայությունների քարտեզագրման աշխատանքներ, ըստ որի՝ մարզում ապրում են 281 միայնակ տարեցներ, որոնք օգնության կարիք ունեն:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

11. Տարեց և կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառում

- Պատասխանատու՝ ԱՍՀՆ
- Կատարման ժամկետ՝ 2018 թթ.
- Ակնկալվող արդյունքները՝ Հասարակական կազմակերպությունների հետ կկնքվեն սուբսիդիայի պայմանագրեր կամ մրցութային կարգով ծառայությունների գնման պայմանագրեր՝ համաձայն գնումների մասին ՀՀ գործող օրենսդրության
- Արդյունքային ցուցանիշները՝ Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների պատվիրակում առնվազն չորս հասարակական կազմակերպության՝ մրցակցային սկզբունքով

2021 թ. հունվարի 1-ի դրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դրամաշնորհի տրամադրման պայմանագիր է կնքել ավելի քան 20 կազմակերպության հետ: Ըստ նախարարության՝ մատուցվող ծառայությունների զգալի մասը պատվիրակվում է հասարակական կազմակերպություններին, որոնց թիվը գնալով աճում է:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է:

12. Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրություն

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
- **Կատարման ժամկետ՝** 2018 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Կիրականացվի տարեցների և ընտանիքների ընտրանքային հետազոտություն որպես խնամքի այլընտրանքային մոդել խնամատար ընտանիքներում տարեցներին խնամելու առկա պահանջարկը ուսումնասիրելու և կարիքները գնահատելու համար
- **Արդյունքային ցուցանիշները՝** Հետազոտության արդյունքների վերաբերյալ կներկայացվեն համապատասխան հաշվետվություն և առաջարկություն խնամատար ընտանիքներում տարեցների խնամքը կազմակերպելու մեխանիզմների վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սույն միջոցառմամբ նախատեսված կարիքի գնահատման հետազոտության մասին տեղեկատվություն չի տրամադրել, ինչը վկայում է, որ նման աշխատանք չի իրականացվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

13. Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծում, փորձնական ծրագրի մշակում և իրականացում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ
- **Կատարման ժամկետ՝** 2019 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Փորձնական ծրագրի իրականացման համար Երևան քաղաքում ընտրված առնվազն 10 ընտանիքում կկազմակերպվի 10 տարեցի խնամքը
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ կառավարության որոշում

Նախորդ միջոցառմամբ նախատեսված տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրությունը պետք է այս միջոցառման հենքը լիներ: Մինչդեռ անկախ կարիքի գնահատման հետազոտության իրականացումից՝ նախարարությունը 2019 թ. շրջանառել է Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու նպատակով Կառավարության որոշման նախագիծ, որը Կառավարությունը հետ է վերադարձրել օրենսդրության մեջ համապատասխան լիազորող նորմ չլինելու պատճառով:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

Գերակայություն 2. Տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, տնտեսական անկախության և արժանապատվության պահպանում

Գերակայություն 2-ի միջոցառումների գնահատումը

N	Միջոցառումը	Իրականացումը
14	Տարեցների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ բժշկական օգնության և խնամքի վերաբերյալ հանրային իրազեկում	Չի կատարվել
15	55 և ավելի տարիքային խմբերում միզասեռական համախտանիշի, օստիոպարոզի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, այդ թվում՝ կրծքագեղձի վաղ ախտորոշման, սկրինինգային ծրագրերի իրականացում և հայտնաբերված ախտաբանությունների անվճար բուժման կազմակերպում	Կատարվել է մասամբ
16	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար շուրջօրյա խնամքի մասնագիտացված տների ստեղծում	Չի կատարվել

14. Տարեցների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ բժշկական օգնության և խնամքի վերաբերյալ հանրային իրազեկում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, ԱՆ, ԶԼՄ-ներ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Տարեցների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տեղեկատվական թերթիկների, բուկլետների տպագրություն, հեռուստատաղիոհաղորդումների կազմակերպում և այլն
- **Արդյունքային ցուցանիշները՝** Յուրաքանչյուր տարի՝ իրազեկման առնվազն 5 միջոցառման իրականացում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրել է հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների, ինչպես նաև՝ առցանց հարթակում հրապարակումների մասին տեղեկատվություն: Տեղեկացրել է նաև, որ տարեց անձանց իրազեկման նպատակով Առողջապահության նախարարությունը ևս հանրային իրազեկման ծրագրեր է իրականացրել:

Առողջապահության նախարարությունն իր հերթին տեղեկացրել է, որ մշակվել են պաստառներ և հաղորդագրություններ, որոնք վերաբերում են նաև տարեց անձանց, և դրանք հասանելի են նախարարության կայքէջի «Քո իրավունքը» դարանում: Նախարարության նշած դարանում, սակայն, գտնվել է միայն «Որ ծառայություններն են անվճար հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար» տեղեկատվական նյութը: Կարող ենք նշել, որ մատչելիության ապահովման տեսանկյունից կարևոր էր տարեց անձանց վերաբերող մասի առանձնացումը ենթավերնագրով, կամ միայն տարեց անձանց թիրախավորմամբ տեղեկատվական նյութի պատրաստումը³²:

³² Տե՛ս «Որ ծառայություններն են անվճար հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար» հրապարակումը հետևյալ հղմամբ՝ [Bujogn-tarec-ev-hashmand.pdf\(moh.am\)](http://Bujogn-tarec-ev-hashmand.pdf(moh.am))

Ինչ վերաբերում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարարության տրամադրած իրազեկման աշխատանքների հղումներին, ապա դրանք հասանելի չեն կամ վերաբերում են ոչ թե իրավունքների մասին տարեցների իրազեկմանը, այլ ներկայացնում են տարեցների կյանքը, նրանց մատուցվող ծառայությունները և այլ համանման տեղեկություններ (օր՝ «Արժանապատիվ ծերության սպասելիս», «Հայկական միայնակ ծերության 3 երանգները», «Մեր տարեցներից ոմանք՝ Նոր տարին դիմավորել են իրենց բախտակիցների հետ, հեռու ընտանիքից»):

Նման հրապարակումները, ինչպես նաև տեղեկությունների՝ նախարարությունների կայքէջերում տեղադրումը չեն կարող համարվել տարեցներին՝ իրենց իրավունքների մասին իրազեկության մակարդակի բարձրացման պատշաճ գործոնություններ:

Թեև միջոցառման արդյունքներից է տեղեկատվական թերթիկների և բուկլետների տպագրությունը, այդ մասին տեղեկատվություն չի տրամադրվել: Կարող ենք եզրակացնել, որ այս առումով աշխատանքներ չեն իրականացվել, և միջոցառման ոչ բոլոր բաղադրիչներով են առկա արդյունքներ:

Նշենք, որ համաձայն արդյունքային ցուցանիշի, 5 տարվա ընթացքում պետք է իրականացվեր նվազագույնը 25 իրազեկման միջոցառում:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

15. 55 և ավելի տարիքային խմբերում միզասեռական համախտանիշի, օստիոպարոզի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, այդ թվում՝ կրծքագեղձի վաղ ախտորոշման, սկրինինգային ծրագրերի իրականացում և հայտնաբերված ախտաբանությունների անվճար բուժման կազմակերպում

- Պատասխանատու՝ ԱՆ
- Կատարման ժամկետ՝ 2018-2021 թթ.
- Ակնկալվող արդյունքները՝ Բնակչության հիվանդացության բեռի և մահացության ցուցանիշի իջեցում, կյանքի որակի բարելավում և կյանքի տևողության բարձրացում
- Արդյունքային ցուցանիշները՝ Բացակայում է

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2018 թ. հունվարից մեկնարկվել է «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրով նախատեսված սքրինինգային հետազոտությունների երկրորդ փուլը, որի շրջանակներում արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով 30-60 տարեկան կանանց մոտ 2018-2021 թթ. ընթացքում իրականացվել է սքրինինգային հետազոտություն՝ ՊԱՊ թեստի հետազոտության միջոցով: 2021 թ. իրականացվել է 55-60 տարեկան 4232 կնոջ ՊԱՊ հետազոտություն:

2018 թվականից աշխատանքներ են տարվել նաև ծրագրի ընդլայնման և մասնավորապես կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելմանն ուղղված սրբինինգային հետազոտությունների իրականացման նպատակով: 2021 թ. մեկնարկել է Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի 50-69 տարեկան կանանց կրծքագեղձի մամոգրաֆիկ հետազոտության ծրագիր, որի շրջանակներում հետազոտություն է անցել Լոռու մարզում 55 և ավելի տարիքային խմբի 5151 կին: Հետազոտություն անցած կանանցից 62-ի մոտ հայտնաբերվել է կրծքագեղձի քաղցկեղ, 59 կնոջ տրամադրվել անվճար մասնագիտացված բուժօգնություն: Սրբինինգային ծրագրի կարևորության և կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման, մասնավորապես՝ ինքնազննման տեխնիկայի ուսուցման վերաբերյալ տպագրվել է շուրջ 40000 բուկլետ, որոնք ընտանեկան բժիշկների/թերապևտների միջոցով տրամադրվում են 50-69 տարիքի կանանց:

Առողջապահության նախարարությունը նաև հայտնել է, որ 2019 թ. Օստեոպարոզի հայկական ասոցիացիայի հետ համատեղ մշակվել և Երևան քաղաքի կանանց կոնսուլտացիաների 150 մանկաբարձ-գինեկոլոգների համար կազմակերպվել են դասընթացներ «Օստեոպարոզի և միզասեռական համախտանիշի վաղ հայտնաբերում և բուժում» թեմաներով:

Փաստացի՝ ՊԱՊ հետազոտություն անցնելու հնարավորություն ունեցել են միայն 55-60 տարեկան կանայք, իսկ կրծքագեղձի մամոգրաֆիկ հետազոտություն միայն մեկ մարզի՝ Լոռու 55-69 տարեկան կանայք: Նշենք, որ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ 55 և ավել տարիքային խմբի կանանց թիվը 449 400 էր, որից 2021 թ. ՊԱՊ հետազոտություն փաստացի անցել է մոտ մեկ տոկոսը³³:

Այս հնարավորությունը կարևոր է և նպաստում է վերաբտադրողական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերմանն ու բուժմանը, այնուամենայնիվ սրբինինգային ծրագրերի շահառուների տարիքային շեմերը սույն միջոցառման շրջանակներից լայն են: Բացի դրանից՝ թիրախային 55 և ավելի տարիքային խմբի ոչ բոլոր կանայք են հնարավորություն ունեցել անցնելու վերոնշյալ հետազոտությունները: Ինչ վերաբերում է միջոցառմամբ նախատեսված միզասեռական համախտանիշի և օստեոպարոզի վաղ հայտնաբերման և բուժման սրբինինգային ծրագրերին, ապա դրանք առհասարակ չեն իրականացվել:

Միջոցառման ակնկալվող արդյունքը նաև մահացության ցուցանիշի իջեցումն է, մինչդեռ ինչպես փաստում են վիճակագրական տվյալները՝ 2018-2021 թթ. ընթացքում Հայաստանում մահացության ցուցանիշն աճել է 12.5 տոկոսով³⁴: Ավելին՝ թոշակառուների շրջանում ինքնասպանության ցուցանիշը նույնպես աճել է: Այն կազմել է 26.2 տոկոս 2020 թ.-ին և 26.7

³³ Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 2. Բնակչություն, էջ 46, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/demog_2021_2_.pdf

³⁴ 2020 և 2021 թթ. մահացության ցուցանիշից հանվել են 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով զոհվածների և COVID-19-ից մահացածների թվերը, Տե՛ս Ժողովրդագրական իրավիճակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 151, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.armstat.am/file/article/sv_12_20a_520.pdf և Ժողովրդագրական իրավիճակը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 157, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf

տոկոս՝ 2021 թ.-ին: Բացի դրանից, որ ցուցանիշն աճել է, այն նաև երկրորդ հորիզոնականում է գործազուրկների շրջանում ինքնասպանության ցուցանիշից հետո³⁵:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

16. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար շուրջօրյա խնամքի մասնագիտացված տների ստեղծում

- **Պատասխանատու՝** ԱՍՀՆ, ԱՆ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2021 թ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Հանրապետության երկու քաղաքում կստեղծվեն շուրջօրյա խնամքի մասնագիտացված երկու տուն՝ ծերունական փսիխոզով, թուլամտությամբ (Այլցիեյների հիվանդություն) տառապող տարեցների համար
- **Արդյունքային ցուցանիշները՝** Խնամքի մասնագիտացված տները նախատեսվում է ստեղծել Երևանում՝ 30 տեղանոց, և Վանաձորում՝ 20 տեղանոց

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում ձեռք է բերվել առանձնատուն, իսկ նույն մարզի Ակնաշեն և Մրգաստան համայնքներում փոքր տներ, որոնք վերանորոգումից հետո գործարկվելու են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Նշենք, որ նախարարության տրամադրած տեղեկությունը չի համապատասխանում սույն միջոցառման արդյունքային ցուցանիշներին:

Ինչ վերաբերում է նշված տների գնմանը, ինչպես ցույց է տալիս գնման հայտարարության ուսումնասիրությունը, որը տեղադրվել էր 2019 թ. դեկտեմբերին «Հրատապ մեկ անձ» ընթացակարգով, առանձնատները նախատեսված էր ձեռք բերել ոչ թե Հայաստանի Հանրապետության Երևան և Վանաձոր քաղաքներում, այլ Արարատի կամ Արմավիրի կամ Տավուշի մարզերում կամ Աշտարակի տարածաշրջանում³⁶: Ավելին՝ «Հետք»-ը հրապարակում էր պատրաստել տվյալ տների ձեռքբերման ընթացակարգի խախտումների վերաբերյալ³⁷, և հրապարակման հիման վրա 2020 թ. օգոստոսի 28-ին հարուցվել է քրեական գործ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից, իրենց պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, չափորոշիչներին չհամապատասխանող ապրանքներ ձեռք բերելու դիմաց անհիմն 53 մլն 680 հազար դրամ վճարելու դեպքի

³⁵ Տե՛ս Ժողովրդագրական իրավիճակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 159, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_520.pdf

³⁶ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարություն, ARMEPS Պլատֆորմ, ՄՀ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար անշարժ գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «Հրատապ մեկ անձ» գնման ընթացակարգի հրավեր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=5542755>

³⁷ Տե՛ս Սոցապը 6 ամիս առաջ «հրատապ» կարգով տարեցների համար տներ է գնել, սակայն դրանք մինչ օրս բնակեցված չեն, հոդված, 29 հունիս 2020 թ., «Հետք» ինտերնետային թերթ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hetq.am/hy/article/118819>

առթիվ³⁸: Այսինքն պետությանը պատճառվել է վնաս, իսկ տարեց անձինք հերթական անգամ գրկվել համայնքային ծառայություններ ունենալու հնարավորությունից:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

Գերակայություն 3. Տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում

Գերակայություն 3-ի միջոցառումների գնահատումը

N	Միջոցառումը	Իրականացումը
17	Լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում և այդ շտեմարանում տարեցների լրացուցիչ և շարունակական կրթության մասին տվյալների ընդգրկումը	Չի կատարվել
18	Տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովում	Կատարվել է մասամբ
19	Տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում	Կատարվել է
20	Տարեցների ներուժի օգտագործում՝ ժողովրդական արհեստների փոխանցում երիտասարդ սերնդին	Կատարվել է մասամբ
21	Ավագ սերնդի վաստակի գնահատում, միջսերնդային կապերի ամրապնդում, համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովում	Կատարվել է մասամբ
22	Համայնքներում տարեցների սոցիալական և տնտեսական ակտիվության բարձրացման նպատակով ակտիվ կենսակերպ վարող տարեցների մասնակցությամբ համայնքային խմբերի ստեղծում և աջակցում	Կատարվել է

17. Լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում և այդ շտեմարանում տարեցների լրացուցիչ և շարունակական կրթության մասին տվյալների ընդգրկումը

- Պատասխանատու՝ ԿԳՆ
- Կատարման ժամկետ՝ 2017-2021 թթ.
- Ակնկալվող արդյունքները՝ Տարեցների լրացուցիչ և շարունակական կրթությանը վերաբերող ցուցանիշները կներառվեն լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանում
- Արդյունքային ցուցանիշները՝ Տեղեկատվական համակարգը հասանելի կլինի շահագրգիռ պետական և հասարակական կազմակերպությունների համար

³⁸ Տե՛ս Տարեցների համար նախատեսված 3 փոքր տները մնում են չվերանորոգված ու չբնակեցված, հողված, 27 հոնվար 2021 թ., «Հետք» ինտերնետային թերթ, հասանելի է հետևյալ հղմամբ <https://hetq.am/hy/article/126735>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականից նախարարությունն իրականացնում է ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների և անհատ ձեռներեցների կողմից ներկայացվող լրացուցիչ կրթական ծրագրերի երաշխավորման գործընթաց՝ ըստ ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի³⁹: Լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը (որոնցից օգտվում են նաև տարեցները) նախարարության կողմից երաշխավորվում են 3 տարի ժամկետով և ներառվում են լրացուցիչ կրթական ծրագրերի էլեկտրոնային շտեմարանում:

Նշենք, որ միջոցառմամբ նախատեսվում է **ստեղծել** լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարան, սակայն նախարարությունը հղում է անում դեռևս 2015 թ. ընդունված որոշմանը: Այսինքն՝ ենթադրաբար կամ շտեմարանն արդեն իսկ ստեղծված էր, և այդ դեպքում անհասկանալի է տվյալ միջոցառման ձևակերպումը, կամ որոշման մեջ հիշատակվող ուսուցման ազգային ռեեստրն այլ հասկացություն է, և այդ դեպքում միջոցառմամբ նախատեսված շտեմարանը չի ստեղծվել:

Ըստ այդմ՝ միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

18. Տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովում

- **Պատասխանատու՝** Մշակույթի, Տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2018 թ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Կենսաթոշակատուներին՝ մշակութային ծառայություններից օգտվելու առավել մատչելի պայմանների ապահովում, համայնքներում գործող մշակույթի տներում տարեցների համար նախատեսված խաղասենյակների վերանորոգում և կոմունալ պայմանների բարելավում (ըստ անհրաժեշտության), համայնքների բակերում տարեցների համար զրուցարանների տեղադրում, համայնքներում տարեցների շփման, հաղորդակցման, ժամանցի կազմակերպման համար համապատասխան պայմանների ստեղծում
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ կառավարության որոշում և մարզային և համայնքային ծրագրերի հաստատում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միջոցառման իրականացման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել է 2017-2020 թթ. համար: Տեղեկատվության զգալի մասը, ի դեպ, վերաբերում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ մշակութային կյանքին մասնակցության խթանման ուղղությամբ աշխատանքներին: Տարեց անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովման ուղղությամբ՝

- «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակներում այդ տարիների ընթացքում ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում տնային պայմաններում գրադարանային

³⁹ Կառավարության որոշումը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://escs.am/files/files/2019-07-03/01368f624450ee66ebd0876d310810b8.pdf>

սպասարկում է ստացել 207 հաշմանդամություն ունեցող և տարեց անձ, տրամադրվել է 17255 միավոր տեղեկույթ,

- «Բարեգործական՝ տարեց, հաշմանդամ և երեխաների իրավունքների պաշտպանության» ծրագրերին աջակցելու շրջանակներում «Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոն», «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն», «Վանաձորի Հովհ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ների կողմից կազմակերպվել են միջոցառումներ:
- Արև տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում գրադարաններում (Հայաստանի ազգային գրադարան, Խնկո-Ապոր անվան մանկական ազգային գրադարան, մարզային 10 գրադարան) կույր և թույլ տեսող անձանց համար լսողական խորհրդանշանների միջոցով ապահովվել է տեղեկատվության մատչելիությունը: 2017-2020 թթ. սպասարկվել է 99 շահառու, տրամադրվել է 827 միավոր բրայլյան և ձայնային գիրք:

Իրականացվել են նաև մատչելիության ապահովման, մասնավորապես՝ մշակութային հաստատությունները թեքահարթակներով ապահովելու, ինչպես նաև սանհանգույցները բարեկարգելու ուղղությամբ աշխատանքներ:

2020 թ. փետրվարի 10-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները ստորագրել են հուշագիր, համաձայն որի՝ կենսաթոշակառուներին մշակութային օջախներ այցելելու նպատակով կտրամադրվեն անվճար տոմսեր: Յուրաքանչյուր կենսաթոշակառու տարին 3 անգամ հնարավորություն ունի այցելելու իր նախընտրած յուրաքանչյուր թատերահամերգային կազմակերպություն, իսկ թանգարաններ՝ ամիսը 2 անգամ⁴⁰: Նախաձեռնությունը ողջունելի է, այնուամենայնիվ դրա հասանելիությունը մարզի բնակիչների համար խնդրահարույց է, քանի որ նրանք պետք է հոգան միջմարզային տեղափոխության ծախսը: Օրինակ՝ 15 թատրոններից 11-ը Երևանում են, մեկական թատրոն՝ Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում և Գորիսում⁴¹: Ըստ այդմ՝ տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ուղղությամբ ձեռնարկված գործողությունները նախ սահմանված ժամանակում չեն մեկնարկել, իրականացումն էլ ամբողջական չէ:

ՀՀ մարզպետարանները ևս իրականացրել են աշխատանքներ այս միջոցառման շրջանակներում, սակայն դրանք եղել են հիմնականում ոչ պլանավորված և ոչ ժամկետում, տրամադրված տեղեկատվությունը վերաբերել է նաև այլ միջոցառումների իրականացմանը:

⁴⁰ Կենսաթոշակառուներին և հաշմանդամություն ունեցող անձանց պետական թատրոններ և թանգարաններ այցելելու անվճար տոմսեր կտրամադրվեն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.mlsa.am/?p=24996>

⁴¹ Տե՛ս Թատերարվեստի ոլորտ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://escs.am/am/static/theatrical-art?s=culture>

Արմավիրի մարզպետարանը տեղեկացրել է, որ բոլոր քաղաքային և գյուղական համայնքների մշակույթի տներում սենյակներ են տրամադրվել տարեցների ժամանցի համար, սուբվենցիոն ծրագրերով և այլ միջոցներով համայնքներում տեղադրվել են զրուցարաններ, կահավորվել խաղասենյակներ: Զրուցարանների և խաղասենյակների վերաբերյալ ստույգ տվյալներ, այնուհանդերձ, չեն տրամադրվել՝ հղում անելով մարզպետարանի կայքէջին, որի ուսումնասիրմամբ 2018 թ. նման տվյալներ չեն հայտնաբերվել:

Համաձայն **Գեղարքունիքի մարզպետարանի՝** 15 համայնքի մշակույթի տներում հատկացվել է 16 խաղասենյակ, 10 համայնքի բակերում տեղադրվել է 2 տաղավար և 11 զրուցարան (զրուցարաններից 4-ը վերանորոգվել/տեղադրվել է համայնքի բնակիչների միջոցներով):

Կոտայքի և Շիրակի մարզպետարանները տեղեկացրել են, որ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության համայնքային և ցերեկային կենտրոններ հաճախող շահառուների համար կազմակերպվել է ակտիվ ժամանց: Տարեցները կենտրոններում հնարավորություն են ունեցել զբաղվել ընթերցանությամբ, խաղերով՝ շախմատ, նարդի և այլն: Պարբերաբար կազմակերպվել են ժամանցային միջոցառումներ, մշակութային տարբեր թեմաներով քննարկումներ, ինչը նպաստել է, որ տարեցները չմեկուսանան հասարակությունից և վարեն հնարավորինս ակտիվ կյանք:

Լոռու մարզպետարանը տեղեկացրել է, որ Շահումյան համայնքում Հայկական Կարմիր խաչի և «Շահումյանի կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի համագործակցությամբ 2019 թ. ՀՈԱԿ-ի շենքում բացվել է տարեց անձանց համար նախատեսված սենյակ: Տարեցները ներգրավվել են տարբեր միջոցառումներում, գյուղական մեծ թվով համայնքներում առկա է տարեց անձանց հանգստի/ժամանցի սենյակ: Այնուամենայնիվ, ըստ մարզպետարանի տրամադրած տեղեկատվության՝ մարզի համայնքներում 2017-2020 թթ. ընթացքում մշակույթի տներում տարեցների համար նախատեսված խաղասենյակներ չեն վերանորոգվել, իսկ բակերում նոր զրուցարաններ չեն տեղադրվել: Ինչ վերաբերում է մշակութային ծառայություններից օգտվելու համար առավել մատչելի պայմանների ապահովմանը, ապա տեղեկացրել է, որ դրանք միշտ առկա են համայնքների մշակույթի օջախներում (առկա են սեղանի խաղեր, գրականություն և այլն):

Սյունիքի մարզպետարանը տեղեկացրել է, որ 2017, 2018 և 2020 թվականներին մարզում իրականացվել են բարեկարգման տարբեր աշխատանքներ: 2018 թ. մասնավորապես կառուցվել են խաղահրապարակներ, մարզադաշտ, գրադարան-քարանձավ, զբոսայգի, բարեկարգվել մշակույթի տան և թատրոնի հարակից տարածքներ:

Թեև միջոցառումը նախատեսված էր իրականացնել 2018 թ., **Վայոց ձորի մարզպետարանը** տեղեկացրել է, որ COVID-19 համավարակով պայմանավորված խուսափել են տարեցների համար բազմամարդ մշակութային միջոցառումներ կազմակերպելուց: Մշակույթի տներում նախատեսված խաղասենյակները 2020 թ. չեն վերանորոգվել, մինչդեռ նախորդ տարիներին մարզի համայնքներում կառուցվել են տարեցների համար բացօթյա և փակ խաղասրահներ: 2020 թ. Ջերմուկ համայնքի Սուրբ Գայանե եկեղեցու հարևանությամբ, Կեչուտ և Գնդեվազ

բնակավայրերում տեղադրվել են 5 զրուցարաններ: Ջրուցարաններ տեղադրվել են նաև Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան շենքերի բակային հատվածներում:

Արարատի մարզպետարանը տեղեկացրել է, որ 2018 թ. տարեցների համար Այգավան, Նոր-Ուղի, Դիտակ, Ղուկասավան և այլ համայնքներում կառուցվել են զրուցարան-տաղավարներ, հատկացվել սեղանի խաղեր: 2019 թ. Արարատի քաղաքապետարանը ձեռք է բերել նստարաններ, սեղաններ, սեղանի խաղեր: Վերանորոգվել է ջեռուցման համակարգը և սանհանգույցը տարեցների համար նախատեսված տարածքում: Արտաշատ և Արարատ քաղաքների այգիներում տարեցների համար տրամադրված են տարածքներ նարդի, շաշկի խաղալու համար: Մասիս քաղաքում կազմակերպվել են խաղեր, ֆիլմի դիտում: 2020 թ. զրուցարան է կառուցվել Գինեվետ համայնքում: Բուրաստան համայնքում օգտագործվում է համայնքապետարանին հարակից բակի այգին, որտեղ առկա են նստարաններ և զրուցարան-տաղավար:

Արագածոտնի մարզպետարանը տեղեկացրել է, որ COVID-19 համավարակով պայմանավորված տարեցների համար մշակութային միջոցառումներ չեն իրականացվել, իսկ **Տավուշի մարզպետարանը** միջոցառման կատարման մասին տեղեկատվություն առհասարակ չի տրամադրել:

Ինչպես տեսնում ենք վերը ներկայացվածից, պատասխանատու մարմինները որոշակի աշխատանքներ միջոցառման շրջանակներում իրականացրել են, սակայն դրանք հիմնականում պլանային և թիրախավորված չեն եղել: Ավելին՝ միջոցառման ակնկալվող արդյունքները չեն իրականացվել. ՀՀ կառավարության որոշում չի ընդունվել, և մարզային ու համայնքային ծրագրեր չեն հաստատվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

19. Տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում

- **Պատասխանատու՝** Մշակույթի նախարարություն, մարզպետարաններ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Խրախուսվում է տարեցների ակտիվ կենսակերպը, ստեղծագործական մղումները, ապահովվում ինքնաիրացման ու ինքնաբավության մակարդակի բարձրացումը
- Պրոֆեսիոնալ և սիրողական (ինքնուս) ստեղծագործող տարեցների աշխատանքների ցուցադրություն՝ նրանց մասնակցությամբ ցուցահանդեսների, ֆիլմերի, թատերահամերգային միջոցառումների կազմակերպում
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ մարզերում և Երևանում գործող թատերահամերգային կազմակերպությունները, թանգարանները և գրադարանները կիրականացնեն տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է առնվազն 5 միջոցառում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկության համաձայն՝ արդյունքային ցուցանիշով պահանջված տարեկան առնվազն 5 միջոցառումները կազմակերպվել են:

Նշենք, որ միջոցառման կատարման վերաբերյալ տրամադրվել է միջոցառմանը չվերաբերող մեծածավալ տեղեկատվություն: Մասնավորապես՝ նախարարությունը և մարզպետարանները տեղեկություն են տրամադրել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ մասնակցության վերաբերյալ, մինչդեռ միջոցառմամբ նախատեսվում էր տարեց անձանց ակտիվ մասնակցության ու ներգրավման խրախուսում: Ավելին՝ տեղեկություններ են ներկայացվել նաև ոչ տարեց, օր՝ երիտասարդ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ: Նման աջակցությունն անշուշտ կարևոր է, սակայն նրանք սույն միջոցառման թիրախային խումբը չեն:

Տվյալների տրամադրմանը նման մոտեցումը խնդրահարույց է պատասխանատուների հաշվետվողականության և թափանցիկության առումով:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է:

20. Տարեցների ներուժի օգտագործում՝ ժողովրդական արհեստների փոխանցում երիտասարդ սերնդին

- **Պատասխանատու**՝ Մարզպետարաններ, Մշակույթի նախարարություն, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ**՝ 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները**՝ ՀՀ մարզերում տարեցների ստեղծագործ ներուժի օգտագործման միջոցով տարբեր խմբակների ստեղծում՝ մշակույթի տներում կամ դպրոցներում, որտեղ աշակերտներին կամ երիտասարդներին իրենց արվեստն ու արհեստը կուսուցանեն ժողովրդական վարպետները
- **Արդյունքային ցուցանիշները**՝ Արագածոտնի, Վայոց ձորի և Շիրակի մարզերում կստեղծվեն առնվազն 3-ական խմբակ՝ յուրաքանչյուրում 5-ական սովորող

Վայոց ձորի մարզպետարանի տեղեկացմանք՝ դպրոցներում և մշակույթի տներում գործող արվեստի ու արհեստի խմբակներում ժամանակ առ ժամանակ հյուրընկալվել են տարեց վարպետներ, ովքեր աշակերտների հետ կիսել են իրենց փորձը, մասնագիտական ունակությունները: Արենի համայնքում տարեցները գինեգործության հին ավանդույթները փոխանցել են երիտասարդ սերնդին: Մոռացվող արհեստները կյանքի կոչելու համար արհեստի խմբակներում տարեցները դասավանդել են կարպետագործություն, փայտամշակում: 2020 թ. COVID-19 համավարակով պայմանավորված աշխատանքներ չեն իրականացվել, իսկ 2021 թ. գործել են՝

- Վայք համայնքի արվեստի դպրոցը, որտեղ գործել է 2 խմբակ, ուսուցանել են 2 տարեց, աշակերտների և/կամ երիտասարդների թիվը եղել է 80
- Եղեգնաձորի Գեղարվեստի դպրոցը, որտեղ գործել է 6 խմբակ, ուսուցանել են 2 տարեց, աշակերտների և/կամ երիտասարդների թիվը եղել է 18:

Շիրակի մարզպետարանի տեղեկացմամբ՝ Հայկական Կարմիր Խաչի Շիրակի մարզային կազմակերպության կողմից իրականացվող «Համայնքային ինտեգրված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի բաղադրիչն է տարեցների ներուժի օգտագործումը՝ ժողովրդական արհեստների փոխանցումը երիտասարդ սերնդին: Շիրակի մարզի հինգ՝ Սպանդարյան, Փանիկ, Նոր Կյանք, Հոռոմ և Ամասիա համայնքներում 2018 թ. ընթացքում կատարվել է տեղերում տարածքների տրամադրում, նախաձեռնող խմբերի ուսուցում և այլն: Կարմիր խաչը վերանորոգել, կահավորել է տարածքներ: Աշխատանքներ են տարվել նաև նախաձեռնող խմբերին սարքավորումների ձեռքբերման և տրամադրման ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում 2019 թ. Գյումրիում հիմնվել է 2 կենտրոն՝ Հովհաննես Շիրակի տուն-թանգարանում և Գյումրու թիվ 29 դպրոցում: Արթիկ, Հառիճավանք, Սպանդարյան, Անուշավան, Փանիկ, Հոռոմ, Նոր կյանք համայնքներում գործել է մեկական կենտրոն, որտեղ կազմակերպվել են նախաձեռնող խմբեր: Խմբերի համար անցկացվել են դասընթացներ և ուսումնավարժական միջոցառումներ: Սպանդարյան համայնքում գործել է փոքր կարի արտադրություն: Աշոցքի մարզամշակութային կենտրոնում գործող ձեռագործի խմբակների պարապմունքներին հրավիրվել են մասնակցելու համայնքում բնակվող ձեռագործ տարեց վարպետներ: 2021 թ. ընթացքում COVID-19 համավարակով պայմանավորված՝ ժողովրդական արհեստների փոխանցման նպատակով մարզում տարեցների և երիտասարդ սերնդի միջև հանդիպումներ չեն կազմակերպվել:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկություններ է տրամադրել մի շարք նախաձեռնությունների մասին, այդ թվում՝ արդյունքային ցուցանիշում նշված Արագածոտնի, Վայոց ձորի և Շիրակի մարզերից բացի այլ մարզերում: Մասնավորապես՝ 2018 թ. Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում ներդրվել է «ԱՐԱՐ» հայ արվեստի պահպանման և հանրահռչակման շարունակական ծրագիրը⁴², որի նպատակն է մարզերում ոչ ֆորմալ ժողովրդական արհեստների կրթական ծրագրերի իրականացման միջոցով տարեց վարպետների արվեստի ու արհեստագործական գիտելիքների փոխանցումը պատանիներին և երիտասարդներին: 2018-2019 թթ. իրականացվել են արհեստների տարբեր ճյուղերի վարպետության դասընթացներ ՀՀ մարզերում: 2020 թ. իրականացվել է երեք ծրագիր, որոնցում ներգրավված են եղել 14 տարեց, 126 աշակերտ, 7 խումբ և 22 համայնք: 2021 թ. շարունակվել է նվագարանների պատրաստման ուսուցման և Արար ծրագրերի իրականացումը: Իրականացվել է նաև երեք ծրագիր, որից երկուսը՝ Երևանում, մեկը՝ Գեղարքունիքի մարզում:

Նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ երիտասարդ սերնդին փոխանցվում են մուշուրբայագործություն, դարբնագործություն, արհեստի ու արվեստի այլ ճյուղեր: Տրամադրվել է նաև դրան չվերաբերող լրացուցիչ տեղեկատվություն:

⁴²«ԱՐԱՐ» հայ ազգային արվեստի կենտրոնի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/ARAR-Armenian-National-Art-Center-%D4%B1%D6%80%D5%A1%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6-408462529568200/?ref=page_internal

Այսպիսով՝ տարբեր աշխատանքներ ու միջոցառումներ տարեց անձանց ներուժի օգտագործման նպատակով կատարվել են, որոշ համայնքներում հատկապես տարեց վարպետների նախաձեռնությամբ բացվել են խմբակներ, որտեղ վերջիններս իրենց հմտություններով կիսվել են երիտասարդ սերնդի հետ: Այնուհանդերձ, **Արագածոտնի** մարզպետարանը տեղեկացրել է, որ միջոցառումներ չեն իրականացվել: Այսինքն՝ միջոցառման արդյունքային ցուցանիշն ապահովվել է մասամբ:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

21. Ավագ սերնդի վաստակի գնահատում, միջսերնդային կապերի ամրապնդում, համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովում

- **Պատասխանատու՝** Մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2017-2021 թթ.
- **Ակնկալվող արդյունքները՝** Կանցկացվեն մեծարման երեկոներ՝ նվիրված պատերազմի վետերաններին, վաստակաշատ տարեց մարդկանց, որոնցում կներգրավվեն նաև սովորողներ: Տարեցները կմասնակցեն համայնքային կյանքին վերաբերող որոշումների կայացմանը
- **Արդյունքային ցուցանիշները՝** Յուրաքանչյուր տարի կիրականացվի վաստակաշատ տարեցների մեծարման առնվազն 5 միջոցառում
- ՀՀ համայնքներում կստեղծվեն ավագանիներին կից ավագների խորհուրդներ, յուրաքանչյուր համայնքում 3-5 վաստակաշատ ու փորձառու տարեցի մասնակցությամբ (գործընթացն ամբողջությամբ կիրականացվի 5 տարվա ընթացքում

Արագածոտնի մարզպետարանը տեղեկացրել է, որ COVID-19 համավարակի պատճառով միջոցառումներ չեն իրականացվել: **Տավուշի մարզպետարանը** 2017-2020 թթ. համար ևս հայտնել է, որ COVID-19-ով պայմանավորված միջոցառումներ չեն իրականացվել, իսկ 2021 թ. տեղի են ունեցել մեծարման 10 երեկոներ Դիլիջան, Իջևան, Ազատամուտ, Սևքար և Նոյեմբերյան համայնքներում: Ինչ վերաբերում է որոշումների կայացմանը մասնակցությանը, ապա 2021 թ. գործել է Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրում ավագների խորհուրդը, որին ներգրավված է եղել 10 տարեց անձ:

Արմավիրի մարզպետարանը տեղեկացրել է, որ տարեց անձինք ընդգրկված են մարզի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնակցում են համայնքային կյանքին և որոշումների կայացմանը: Մարզի 97 համայնքների 744 ավագանու անդամներից 86-ը տարեցներ են: Ավագանիներին կից խորհուրդներում ընդգրկվածության մասին, սակայն, տեղեկատվություն չի տրամադրվել: Ինչ վերաբերում է տարեցների մեծարմանը, ապա 2017-2019 թթ. նման միջոցառումների մասին տեղեկատվություն չի տրամադրվել, 2020 թ. COVID-19-ով պայմանավորված չեն իրականացվել, իսկ 2021 թ. Արմավիր և Էջմիածին քաղաքներում իրականացվել են 2-ական միջոցառումներ:

Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկացմամբ՝ 2017-2020 թթ. մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում, մարզային գրադարաններում պարբերաբար

կազմակերպվել են մեծարման երեկոներ, հանդիպումներ, քննարկումներ Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի վետերանների հետ: Երկրագիտական թանգարանում պատերազմի և աշխատանքային վետերանների վերաբերյալ գործում է մշտական ցուցադրություն: 2021 թ. անց է կացվել ընդհանուր թվով 15 մեծարման երեկո Ճամբարակ, Սևան, Գավառ, Գեղամասար, Երանոս համայնքներում: Ավագանիներին կից ավագների խորհուրդներ 2017-2020 թթ. չեն ստեղծվել, 2021 թ. գործել են Ճամբարակի և Սևանի ավագների խորհուրդները (ներգրավված տարեցների թիվը համապատասխանաբար 15 և 13):

Լոռու մարզպետարանը տեղեկացրել է, որ 2017-2019 թթ. մարզի գրեթե բոլոր համայնքներում տարբեր ժամանակահատվածներում մեծարանքի և վաստակաշատ տարեցների գնահատման միջոցառումներ են իրականացվել: Ավանդույթ է դարձել տարեց անձանց, այդ թվում՝ պատերազմի վետերանների, վաստակաշատ մարդկանց՝ դպրոցականների և ուսանողության հետ հանդիպումներում ներգրավելը, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների և դպրոցականների՝ տարեց անձանց/տարեցների տներ այցելությունները: Մեծարման բազմաթիվ միջոցառումները եթեր են հեռարձակվել «Լոռվա արվեստագետներ» հաղորդաշարով: Կարմիր Խաչի Հայկական ընկերությունը 9 համայնքներում ձևավորել է տարեցների 10 ակտիվ խմբեր, որոնց հեռահար նպատակն է հետապնդում նաև միջսերնդային կապերի ամրապնդումը: 2020 թ. միջոցառումներ գրեթե չեն իրականացվել, իսկ 2021 թ. անց է կացվել մեծարման 18 երեկո: Ինչ վերաբերում է տարեց անձանց՝ համայնքային կյանքին որոշումների կայացմանը մասնակցությանը, ապա մարզի մեծաթիվ համայնքներում գործում են ավագ սերնդի ներկայացուցիչների ներգրավմամբ հանրային խորհուրդներ: 2021 թ. գործում է Լեռնապատում համայնքի ղեկավարին կից հանձնաժողով, որտեղ ներգրավված է 6 տարեց, Ալավերդի համայնքի ղեկավարին կից 3 խորհրդակցական մարմին, որոնցում ընդգրկված է 19 տարեց:

Շիրակի մարզպետարանը տեղեկացրել է, որ ավագ սերնդի վաստակը գնահատելու նպատակով 2018 թ. Գյումրու համայնքապետարանը կազմակերպել է Հայրենական մեծ պատերազմի 4 վետերանի հետ հանդիպում և պարզևատրել նրանց: Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, և Գյումրիում բնակվող 100 տարեկան մեկ տարեցի տրամադրվել ֆինանսական աջակցություն: 2019 թ. 100 տարին բոլորած 2 տարեց է ֆինանսական աջակցություն ստացել մարզպետարանի կողմից: Տարվա ընթացքում տոնական օրերին Գյումրու տուն-ինտերնատում կազմակերպվել է համերգ, հյուրասիրություն, տրվել են նվերներ, Հայրենական մեծ պատերազմի 20 վետերան պարգևատրվել է: Կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի 2 վետերանի մեծարման միջոցառում, վերջիններս պարգևատրվել են Գյումրու քաղաքապետարանի հուշամեդալով: Մեծարման երեկոներ են անց կացվել նաև Աշոցք, Սարապատ, Պեմզաշեն համայնքներում: 2021 թ. տեղի է ունեցել մեծարման երեկո Աշոցք համայնքում:

Սյունիքի մարզպետարանը տեղեկացրել է, որ 2020-2021 թթ. մարզի 8 համայնքներում գնահատել են տարեց անձանց, կազմակերպված միջոցառումներին ապահովել նրանց մասնակցությունն ու ներկայությունը: 2020-2021 թթ. մայիսի 9-ին նշվել է Հաղթանակի 75-

ամյակը: Համավարակով պայմանավորված՝ նախատեսված դահլիճային միջոցառումները չեն իրականացվել, բայց տարեցների մասնակցությամբ կազմակերպվել են զոհվածների, անհայտ կորածների հիշատակման արարողություններ մարզի հուշահամալիրներում: Միջսերնդային կապի ամրապնդման խթան է եղել նաև համայնքներում անցկացվող ամառային ու ձմեռային զորակոչերը, նորակոչիկներին հանդիսավոր բանակ ճանապարհելու միջոցառումներին տարեց անձանց խոսքով ու ելույթներով ոգեշնչումը: 2021 թ. Գորիս և Քաջարան համայնքներում անց է կացվել մեծարման 6 երեկո:

Վայոց ձորի մարզպետարանը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր տարի համայնքներում կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի, Աշխատավորների միջազգային և տարեցների օրվա կապակցությամբ: Արենի բնակավայրում բացվել է աշխատանքային հերոսներին նվիրված պուրակ, որին մասնակցել և մեծարվել է համայնքի ութսունամյա բնակիչը: Միջսերնդային կապերի ամրապնդման նպատակով Արենի համայնքում տարեցներին նոր սերունդը սովորեցնում է նաև ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու ձևերը: Թեև 2020 թ. համավարակով պայմանավորված բազմամարդ մշակութային միջոցառումներ չեն իրականացվել, այնուհանդերձ Հայրենական մեծ պատերազմի 5 վետերաններին և Գլաձոր համայնքի հարյուրամյակը բոլորած 3 տարեցներին մարզպետարանը և համայնքապետարանները շնորհավորել և նվերներ են փոխանցել: Տարեցները ընդգրկված են մարզի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնակցում են որոշումների կայացմանը: 8 համայնքների ավագանու կազմում ընդգրկված է 15 տարեց: Հանրային լսումների կամ համայնքային տարբեր խնդիրների լուծման, քննարկումների ժամանակ միշտ ներգրավված են փորձառու տարեցներ: 2021 թ. Արենի, Մալիշկա, Ջերմուկ համայնքներում անց է կացվել մեծարման 6 երեկո:

Վոտայքի մարզպետարանը տեղեկություն տրամադրել է միայն 2021 թ. համար՝ հայտնելով, որ Հրազդան համայնքում համապատասխան միջոցառումներ չեն իրականացվել, նաև համայնքի ավագների խորհուրդ չի գործում:

Վերը նշված տեղեկատվությունից կարող ենք հանգել, որ տարբեր մարզերում միջոցառումը իրականացվել է տարբեր կերպ: Թեև համավարակը մեծ ազդեցություն է ունեցել այս միջոցառման իրականացման վրա, այնուամենայնիվ մինչ համավարակը և համավարակի հարաբերական հանգիստ շրջանում նախատեսված ծավալի աշխատանքներ չեն տարվել հատկապես ավագների խորհուրդներ ստեղծելու առումով: Ավագների խորհուրդներ ստեղծվել են միայն որոշ մարզերի որոշ համայնքներում, թեև նախատեսվում էր 5 տարիների ընթացքում խորհուրդներ ստեղծել բոլոր համայնքներում: Ավելի շատ աշխատանքներ տարվել են տարեցների մեծարման երեկոների իրականացման շրջանակներում, սակայն այս առումով ևս նախատեսված արդյունքային ցուցանիշները չեն արձանագրվել:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է մասամբ:

22. Համայնքներում տարեցների սոցիալական և տնտեսական ակտիվության բարձրացման նպատակով ակտիվ կենսակերպ վարող տարեցների մասնակցությամբ համայնքային խմբերի ստեղծում և աջակցում

- **Պատասխանատու՝** Համայնքապետարաններ, ՀԿ-ներ (համաձայնությամբ)
- **Կատարման ժամկետ՝** 2019 թ.
- **Ակնկալվող արդյունքները՝** ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ակտիվ տարեցներից կձևավորվեն համայնքային խմբեր
- **Արդյունքային ցուցանիշները՝** ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կստեղծվի 20 համայնքային խումբ՝ կազմված ակտիվ տարեցներից, որոնք կամավորական հիմունքներով աջակցություն կցուցաբերեն իրենց հասակակիցներին՝ համապատասխան մասնագետների օգնությամբ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ Հայկական Կարմիր խաչի աջակցությամբ 2018 թ. Շիրակի ու Լոռու մարզերի 10 համայնքներում (յուրաքանչյուրում՝ 5-ական) ստեղծվել են ակտիվ երկարակեցության խմբեր 150 ակտիվ տարեցի ներգրավմամբ, որոնք անցել են համայնքային աշխատանքների կազմակերպման թեմայով դասընթաց: 2020 թ. դրությամբ տարեցների թիվը հասել է 200-ի: Խմբերն ակտիվորեն զբաղվում են համայնքի խնդիրներով, օգնում համայնքի խնամքի կարիք ունեցող տարեցներին: Յուրաքանչյուր խումբ ունի իր լիդերը, իսկ նրանց աշխատանքը համակարգում է մարզային համակարգողը:

Այսպիսով՝ մարզերում ձևավորվել են համայնքային խմբեր, որոնք, ըստ նախարարության, ակտիվ են և համալրվում են:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է:

Գերակայություն 4. Տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Գերակայություն 4-ի միջոցառման գնահատումը

N	Միջոցառումը	Իրականացումը
23	Տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում	Կատարվել է

23. Տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում

- Պատասխանատու՝ ԱՍՀՆ
- Կատարման ժամկետ՝ 2017-2021 թթ.
- Ակնկալվող արդյունքները՝ Մասնագետների որակավորման բարձրացում, մասնագիտական կարողությունների զարգացում
- Արդյունքային ցուցանիշները՝ Յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի տարեցների հետ աշխատող առնվազն 100 մասնագետ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի մշակած մասնագետների վերապատրաստման ծրագրով 2018-2020 թթ. վերապատրաստվել են տարեց անձանց հետ աշխատող մոտ 500 աշխատակիցներ՝ հետևյալ թեմաներով.

1. «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում»,
2. «Տարեցների խնամքի առանձնահատկությունները»,
3. «ՀՀ-ում վերականգնողական օգնությունը և դրա տրամադրման կարգն ու պայմանները»,
4. «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները»:

2021 թ. Իրականացվել են վերապատրաստման հետևյալ դասընթացները.

1. «Տարեցների խնամքի առանձնահատկությունները» հեռավար դասընթաց՝ 59 անձի մասնակցությամբ,
2. «Տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրները և կառավարման մեթոդները» դասընթաց՝ 109 անձի մասնակցությամբ:
3. «Սոցիալական աշխատանք տարեցների հետ» հեռավար դասընթաց՝ 30 անձի մասնակցությամբ:

Վերապատրաստման դասընթացներ են իրականացրել նաև Տարեցների առողջության ապահովման և խնամքի ասոցիացիան՝ «Բուժքրոջ դերը ծերաբուժության մեջ» թեմայով և «Հայկական Կարիտասը»՝ «Անկողնային հիվանդի խնամքը» թեմայով, որոնց մասնակցել են նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում աշխատող հարյուրավոր բուժքույրեր և խնամողներ:

Կարող ենք նշել, որ առկա է/մշակվում են ծրագրեր, որոնց միջոցով իրականացվում են ակնկալվող արդյունքում նշված տարեկան առնվազն 100 մասնագետի վերապատրաստման դասընթացներ: Հարկ է սակայն նկատել, որ դասընթացներին մեծաթիվ անձանց

մասնակցությունը դեռևս արդյունավետության ցուցանիշ համարվել չի կարող: Կարևոր է մշակել և ներդնել նաև վերապատրաստման արդյունավետության գնահատման մեխանիզմ:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ կատարվել է:

Գերակայություն 5. Տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում

Գերակայություն 5-ի միջոցառման գնահատումը

N	Միջոցառումը	Իրականացումը
25	Տարեց անձանց՝ աշխատանքային կյանքում առավել երկար մնալու իրավական հիմքերի և կարգավորումների ապահովում	Չի կատարվել

24. Տարեց անձանց՝ աշխատանքային կյանքում առավել երկար մնալու իրավական հիմքերի և կարգավորումների ապահովում

- Պատասխանատու՝ ԱՍՀՆ
- Կատարման ժամկետ՝ 2020 թ.
- Ակնկալվող արդյունքները՝ Առավել երկար աշխատանքային կյանքում մնալու շնորհիվ կապահովվի տարեցների նյութական անկախությունը, ու կբարելավվեն կենսապայմանները, ինչպես նաև՝ հնարավորություն կընձեռվի նրանց իրենց փորձը փոխանցելու ու մասնագիտական հմտությունները սովորեցնելու երիտասարդներին
- Արդյունքային ցուցանիշները՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021 թ. հունվարին տեղեկացրել է, որ միջոցառումն իրականացվել է մասամբ: 2019 թ. կազմակերպվել է քննարկում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մշակվել է համապատասխան գործողությունների պլան: Նաև գրություն է ուղարկվել Հայաստանի գործատուների միությանը՝ ակնկալելով վերջինիս միջնորդությունն ու հորդորը գործատուներին՝ աշխատանքի ընդունելիս բացառելու տարիքային խտրականությունը, ինչպես նաև՝ խնդրել գործատուներին որոշ աշխատատեղերում աշխատանքի ընդունել տարեց անձանց՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթն ու տվյալ անձանց փորձն ու կարողությունները: Սակայն COVID-19 համավարակով պայմանավորված, 2020 թ. այդ ուղղությամբ աշխատանքներ չեն տարվել և միջոցառման գնահատում չի իրականացվել:

2022 թ. նախարարությունը հղում է արել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքին, որը սակայն ներկայացված մասերով միջոցառումների ծրագրի իրականացման տարիներին փոփոխություն չի կրել: Նախարարությունը մասնավորապես տեղեկացրել է, որ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աշխատանք փնտրող է համարվում 16 տարին լրացած այն անձը, որը, անկախ զբաղվածություն համարվող գործունեության որևէ տեսակով զբաղված լինելու հանգամանքից, օրենքով սահմանված իր իրավունքներն

իրացնելու նպատակով դիմել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն: Համաձայն «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ աշխատանք փնտրող զբաղված անձինք իրավունք ունեն հաշվառվելու նպատակով դիմելու Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն՝ լիազորված մարմնից ստանալու զբաղվածության մասին ՀՀ օրենսդրության և զբաղվածության պետական ծրագրերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ստանալու տեղեկություններ թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ, հարմար աշխատանքի ընտրության և տեղավորման միջնորդության, մասնագիտական կողմնորոշման, լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների և անգործության՝ վերադասության կամ դատական կարգով բողոքարկման: Այսինքն՝ տարեց անձինք ևս կարող են հաշվառվել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում՝ որպես աշխատանք փնտրող անձ, և օգտվել աշխատանք փնտրող անձանց համար վերոնշյալ հոդվածով սահմանված իրավունքներից: Նաև տեղեկացրել է, որ չի իրականացվել վերլուծություն՝ տարեց անձանց կյանքի որակի վրա վերոնշյալ իրավական կարգավորումների ազդեցությունը գնահատելու համար:

Այսպիսով՝ միջոցառմամբ պահանջվող աշխատանքային օրենսդրության մեջ փոփոխություններ չեն իրականացվել, ինչը պետք է նպաստեր տարեցների՝ առավել երկար աշխատանքային կյանքում մնալուն:

Համաձայն վիճակագրության՝ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ գործազուրկների թիվը 55 և բարձր տարիքի անձանց շրջանում կազմել է 18.9 տոկոս (10 996 մարդ): Նշենք, որ այս ցուցանիշը երրորդ հորիզոնականում է 35-44 և 44-54 տարիքային խմբերից հետո: Ավելին՝ Հայաստանում՝ 35-ից բարձր տարիքային խմբում, գործազրկությունը կազմում է 67.3 տոկոս⁴³: Համաձայն Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման 2021-2023 թվականների ծրագրի՝ բավական ցածր է տարեցների զբաղվածության ցուցանիշը, և ոչ միայն տարեցների. զբաղված բնակչության ընդհանուր թվաքանակում 55+ անձինք կազմում են ընդամենը 19 տոկոս, իսկ 65+ տարիքի աշխատողների թիվը տարեցների ընդհանուր թվաքանակում հասնում է ընդամենը 11 տոկոսի:

Միջոցառման իրականացումը գնահատվում է՝ չի կատարվել:

⁴³ Տե՛ս Աշխատանքի շուկայի ցուցանիշներ, էջ 93, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf